Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատ

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտե

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտե

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատ

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության մարմիններում «Եվրասիական տնտեսական միության 2017 թվականի բյուջեի կատարման հետագա աուդիտ (վերահսկողություն)» արտաքին աուդիտի (վերահսկողության) իրականացման արդյունքներով

(հաստատված է պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների համատեղ որոշմամբ (« » -ի 20__ թվականի որոշում))

1. **Միջոցառումն անցկացնելու հիմքը՝** Եվրասիական տնտեսական միության մարմիններում արտաքին աուդիտ (վերահսկողություն) իրականացնելու 2018 թվականի պլանի 1-ին կետ:

2. **Արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտները՝** Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան), Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. **Միջոցառման առարկան՝**

Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) բյուջեի

միջոցների ձեւավորման, կառավարման եւ տնօրինման գործընթացը, ստացողների կողմից Միության բյուջեի միջոցների, գույքի եւ մյուս ակտիվների օգտագործման արդյունքները, ինչպես նաեւ արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտների գործունեությունը դրանք հաշվետու տարում օգտագործելու ընթացքում.

Միության բյուջեի կատարման մասին հաշվետվության նախագծի պատրաստման գործընթացը, անմիջապես տվյալ հաշվետվության նախագիծը, ինչպես նաեւ դրա հետ ներկայացվող եւ օգտագործող փաստաթղթերն ու նյութերը.

Միության բյուջեի միջոցները տնօրինողների (ստացողների) տարեկան բյուջետային հաշվետվությունը:

4. **Միջոցառման նպատակները՝** բյուջետային եւ այլ հաշվետվությունների հավաստիության, Միության բյուջեի միջոցների, Միության գույքի եւ մյուս ակտիվների օգտագործման հասցեականության, նպատակային բնույթի եւ արդյունավետության սահմանում (Հավելված թիվ 1):

5. **Անցկացման ժամկետները՝** 2018 թվականի սեպտեմբերի 3-ից 11-ը՝ Դատարանում, 2018 թվականի սեպտեմբերի 12-ից հոկտեմբերի 5-ը՝ Հանձնաժողովում:

6. **Գործունեության ժամանակահատվածը, որի ընթացքում անցկացվել է միջոցառումը՝** 2017 թվական:

7. **Միջոցառման ընթացքում պարզվել է հետեւյալը:**

1-ին նպատակ. Ստուգել Միության բյուջեի կատարման մասին հաշվետվության պատրաստման կարգը, դրա կազմը, բովանդակությունը եւ ներկայացման ժամկետները:

2017 թվականին Միության բյուջեն տնօրինողների բյուջետային հաշվետվությունը ձեւավորվել է Բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին հիմնադրույթի վերաբերյալ» (այսուհետ՝ Բյուջեի մասին հիմնադրույթ) թիվ 78 որոշմանը եւ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի «Տարեկան եւ եռամսյակային բյուջետային հաշվետվություն կազմելու եւ ներկայացնելու կարգի մասին հրահանգը հաստատելու վերաբերյալ» թիվ 384 հրամանին համապատասխան:

Աուդիտի ընթացքում Միության 2017 թվականի բյուջեի կատարման մասին հաշվետվության պատրաստման կարգի, դրա կազմի, բովանդակության եւ լիազորված մարմիններ ներկայացման ժամկետների խախտումներ չեն հայտնաբերվել:

Միության 2017 թվականի բյուջեն հաստատվել է Բարձրագույն խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 13 որոշմամբ, որի ստորագրումը փաստացի ավարտվել է 2017 թվականի ապրիլի 12-ին (Ռուսաստանի Դաշնությունում Բելառուսի Հանրապետության դեսպանության 2017 թվականի ապրիլի 11-ի նոտայով ուղարկվել է Հանձնաժողով):

Միության 2017 թվականի բյուջեի եկամուտները սահմանվել են 7 609 125,7 հազ. ռուբլի ծավալով, այդ թվում՝ բաժնեմասային ներդրումները՝ Հայաստանի Հանրապետության՝ 84 461,3 հազ. ռուբլի (1,11 %), Բելառուսի Հանրապետության՝ 346 976,1 հազ. ռուբլի (4,56 %), Ղազախստանի Հանրապետության՝ 541 008,8 հազ. ռուբլի (7,11 %), Ղրղզստանի Հանրապետության՝ 144 573,4 հազ. ռուբլի (1,90 %), Ռուսաստանի Դաշնության՝ 6 492 106,1 հազ. ռուբլի (85,32 %):

Միության անդամ պետությունների կողմից բաժնեմասային ներդրումների փոխանցման պարտավորությունները կատարվել են 7 440 055,8 հազ. ռուբլի գումարի կամ 97,78 %-ի չափով: Բյուջեի եկամտային մասը չի կատարվել՝ կապված

169 069,9 հազ. ռուբլի գումարի չափով բաժնեմասային ներդրումներ կատարելու մասով Բելառուսի Հանրապետության 2017 թվականի պարտքի հետ, որն ամբողջ ծավալով մարվել է 2018 թվականի հունվարի 30-ին:

2017 թվականի ամփոփ բյուջետային ելեւմտացույցի ցուցանիշների կատարումը ծախսերի մասով կազմել է 6 969 608,3 հազ. ռուբլի կամ 87 % (8 011 203,3 հազ. ռուբլի), այդ թվում՝ Հանձնաժողովի մասով՝ 6 664 926,3 հազ. ռուբլի կամ 87 % (7 663 666,7 հազ. ռուբլի), Դատարանի մասով՝ 304 682,0 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 87,7 %-ը (347 536,6 հազ. ռուբլի):

2015 եւ 2016 թվականներին Միության բյուջեի կատարումը բնութագրվում է նաեւ միջոցների զգալի մնացորդների գոյացմամբ:

Ծանոթագրություն. 2015 թվականին Միության բյուջեի ծախսերի կատարումը կազմել է 6 916 897,7 հազ. ռուբլի կամ ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցի (այսուհետ՝ բյուջետային ելեւմտացույց) ցուցանիշի 90,3 %-ը (7 661 946,7 հազ. ռուբլի), այդ թվում՝ Հանձնաժողովի ծախսերը՝ 6 667 172,7 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 90,9 %-ը (7 335 167,8 հազ. ռուբլի), Միության դատարանի ծախսերը՝ 249 724,9 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 76,4 %-ը (326 778,9 հազ. ռուբլի):

2016 թվականին Միության բյուջեի ծախսերի կատարումը կազմել է 6 761 308,3 հազ. ռուբլի կամ ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցի (այսուհետ՝ բյուջետային ելեւմտացույցի) ցուցանիշի 85,6 %-ը (7 896 237,7 հազ. ռուբլի), այդ թվում՝ Հանձնաժողովի ծախսերը՝ 6 498 862,3 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 86,3 %-ը (7 532 186,5 հազ. ռուբլի), Միության դատարանի ծախսերը՝ 262 446,0 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 72,1 %-ը (364 051,2 հազ. ռուբլի):

2-րդ նպատակ. Ստուգել Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեւմտացույց եւ միջոցները տնօրինողների (ստացողների) բյուջետային ելեւմտացույցներ կազմելու եւ վարելու կարգի պահպանումը:

Միության բյուջեի եկամուտների եւ ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցը հաստատվել է 2017 թվականի ապրիլի 12-ին, 2017 թվականի հունվարից ապրիլն ընկած ժամանակահատվածում հաստատվել է յուրաքանչյուր ամիս՝ աճողական կարգով: Միության 2017 թվականի ամփոփ բյուջետային ելեւմտացույցի հաստատման ժամկետը չի խախտվել եւ համապատասխանում է Բյուջեի մասին հիմնադրույթի 24-րդ կետին:

Եկամուտների եւ ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցը հաստատվել է 7 609 125,7 հազ. ռուբլի գումարի չափով, այդ թվում՝ Հանձնաժողովի մասով՝ 7 270 758,0 հազ. ռուբլի, Դատարանի մասով՝ 338 367,7 հազ. ռուբլի: 2017 թվականին ամփոփ բյուջետային ելեւմտացույցում եկամուտների մասով փոփոխություններ չեն կատարվել:

Բյուջեի մասին հիմնադրույթի 35-րդ հոդվածի հիման վրա ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ Միության մարմինների հաշիվներին գոյացած եւ կրեդիտորական պարտքի մարման, հիմնական միջոցների ձեռքբերման, Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման, ինտեգրված տեղեկատվական համակարգի զարգացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման համար նախատեսված միջոցների մնացորդի հաշվին ավելացել է 436 996,9 հազ. ռուբլով եւ նվազել է 2017 թվականի 1-ին կիսամյակում չօգտագործված միջոցների գումարի չափով (34 919,3 հազ. ռուբլի):

Կատարված փոփոխություններից հետո 2017 թվականի ամփոփ բյուջետային ելեւմտացույցը ծախսերի մասով կազմել է 8 011 203,3 հազ. ռուբլի, այդ թվում՝ Հանձնաժողովի ծախսերի մասով՝ 7 663 666,7 հազ. ռուբլի, Դատարանի ծախսերի մասով՝ 347 536,6 հազ. ռուբլի:

Միջոցները տնօրինողների բյուջետային ելեւմտացույցները կազմվել եւ վարվել են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 474 հրամանով հաստատված՝ Միության բյուջեի կառավարչի կողմից

ամփոփ բյուջետային ելեմտացույցի եւ միջոցները տնօրինողների (ստացողների) կողմից բյուջետային ելեմտացույցի կազմման եւ վարման կարգին համապատասխան:

3-րդ նպատակ. Ստուգել Միության մարմինների բյուջետային նախահաշիվների կատարումը:

2017 թվականին Հանձնաժողովի կողմից, որը Միության բյուջեի կառավարիչն է, կատարվել է Միության մարմինների ծախսերի ֆինանսավորում՝ 7 440 055,8 հազ. ռուբլի գումարի չափով, որից Հանձնաժողովին՝ 7 109 200,8 հազ. ռուբլի, Դատարանին՝ 330 855,0 հազ. ռուբլի:

2017 թվականին Հանձնաժողովի գործունեության ապահովման համար հատկացվել է 7 663 666,7 հազ. ռուբլի (հաշվի առնելով մնացորդները՝ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ), որից դրամարկղային ծախսերը կազմել են 6 664 926,3 հազ. ռուբլի կամ 87,0 % (Հավելված թիվ 2):

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հանձնաժողովում չօգտագործված միջոցների մնացորդը կազմել է 998 740,4 հազ. ռուբլի (13 %), որից հիմնական մասը բաժին է ընկնում ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման հետ կապված ծախսերին՝ 458 284,2 հազ. ռուբլի (46 %), գույքն օգտագործելու համար վարձակալության վճարին՝ 168 879,1 հազ. ռուբլի (17 %), անձնակազմին այլ վճարումների եւ աշխատանքի վարձատրության վճարումների հավելագրումների համար հատկացված ծախսերին՝ 109 687,7 հազ. ռուբլի (11%):

Ծախսային հոդվածներով Հանձնաժողովի ծախսերի վերլուծությունը ցույց է տվել հետեւյալը:

<u>«Անձնակազմին վճարելու համար հատկացված ծախսեր՝ Միության մարմինների կողմից իրենց գործառույթների կատարումն ապահովելու նպատակներով»</u> հոդվածով 2017 թվականին հատկացվել է 3 096 986,7 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 2 924 249,1 հազ. ռուբլի (94,4 %), մնացորդը՝ 172 737,6 հազ. ռուբլի (5,6 %):

Հանձնաժողովի աշխատակիցների՝ 1 071 միավ. սահմանված թվաքանակով հաստիքացանկը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ համալրվել է 85 %-ով (913 միավ.), 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 89 %-ով (960 միավ.):

Հանձնաժողովի կոլեգիայի անդամների եւ դեպարտամենտների աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերի սահմանման օրինականության եւ հիմնավորվածության ստուգման արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

«Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման նպատակով ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում» հոդվածով Միության 2017 թվականի բյուջեով նախատեսված է 742 300,0 հազ. ռուբլի: Տարվա ընթացքում ֆինանսավորումն ավելացել է 172 612,4 հազ. ռուբլով եւ կազմել է 914 912,4 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 456 628,2 հազ. ռուբլի (49,9 %), միջոցների մնացորդը՝ 458 284,2 հազ. ռուբլի (50,1 %):

Ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքը (այսուհետ՝ Տեխնիկական առաջադրանք) հաստատվել է Հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 137 որոշմամբ:

Միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին արձանագրության (Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 3 հավելված) 27-րդ կետով նախատեսված է, որ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման աշխատանքներն իրականացվում են պլանների հիման վրա՝ նշելով համապատասխան աշխատանքների կատարման ժամկետներն ու արժեքները:

Հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 6 կարգադրությամբ հաստատված՝ Միության ինտեգրված եւ տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման 2017-2018 թվականների միջոցառումների պլանով նախատեսված է

միջոցառումների անցկացում՝ առանց նշելու աշխատանքների արժեքը:

Հարկ է նկատել, որ նշված միջոցառումների իրագործումն սկսվել է 2015 թվականին՝ առանց Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի նպատակները, խնդիրները սահմանող ծրագրային փաստաթղթի:

Մինչեւ 2025 թվականն ընկած ժամանակահատվածի համար Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի զարգացման ռազմավարությունը հաստատվել է Հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի օգոստոսի 22-ի թիվ 100 որոշմամբ:

Միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին արձանագրության 27-րդ կետին համապատասխան՝ ինտեգրված համակարգի ստեղծումը համակարգվում է Հանձնաժողովի կողմից, որն ապահովում է դրա զարգացումն անդամ պետությունների ազգային հատվածների պատվիրատուների հետ փոխգործակցելու միջոցով՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից մշակվող եւ Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող՝ ինտեգրված համակարգի զարգացման ռազմավարությունը:

Հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 29 որոշմամբ հաստատված՝ Ինտեգրված տեղեկատվական համակարգի շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկը ներառում է 81 ընդհանուր գործընթաց, որոնցից միայն 11 ընդհանուր գործընթացների (14 %) մասով են կազմվել միջպետական թեստավորման ակտեր. 66 ընդհանուր գործընթացների (81 %) մասով իրագործումը չի ավարտվել, որոնցից 57 ընդհանուր գործընթացների մշակման համար ծախսվել է 72 913,0 հազ. ռուբլի. 4 ընդհանուր գործընթացների (5 %) մասով իրագործումն ավարտելու ժամկետները չեն սկսվել:

Հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ ընդհանուր գործընթացների իրագործման ժամկետների առկա ուշացումներն էականորեն կապած են Միության անդամ պետությունների կողմից ազգային հատվածների զարգացման

աշխատանքների ֆինանսավորման խնդիրների հետ:

Հանձնաժողովի կողմից չեն կատարվել Միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին արձանագրության 18-րդ կետով նախատեսված՝ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի բաղադրիչների ստուգում անցկացնելու միջոցառումները, ինչպես նաեւ չի ստեղծվել միջպետական հանձնաժողով այն անցկացնելու համար:

Վերը շարադրվածի առնչությամբ աուդիտի պահի դրությամբ Տեխնիկական առաջադրանքով նախատեսված՝ ինտեգրված համակարգի ստեղծման նպատակները վստահության անդրսահմանային տարածքի ստեղծման եւ զարգացման մասով չեն իրականացվել:

Տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ ինտեգրված համակարգը պետք է ներառի 16 ենթահամակարգեր, որոնցից Հանձնաժողովի կողմից չի իրականացվել 2 ենթահամակարգերի (դատական գործավարության եւ ԱՏԳ սուբյեկտների նույնականացման) մշակումը:

«Գիտահետազոտական աշխատանքներ» հոդվածով 2017 թվականի համար նախատեսված է 250 000,0 հազ. ռուբլի: Տարվա ընթացքում ֆինանսավորումն ավելացել է 60 908,3 հազ. ռուբլով եւ կազմել է 310 908,3 հազ. ռուբլի: Դրամարկղային ծախսերը կազմել են 256 079,9 հազ. ռուբլի (82,4%): 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ չօգտագործված միջոցների մնացորդը կազմել է 54 828,3 հազ. ռուբլի (17,6 %):

Հանձնաժողովում գիտական հետազոտությունների հետ կապված գործունեության կազմակերպման կարգը (այսուհետ՝ Կարգ) հաստատվել է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2017 թվականի մայիսի 30-ի թիվ 147 հրամանով:

Հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի մայիսի 16-ի թիվ 48 կարգադրությամբ հաստատված՝ Հանձնաժողովի գիտահետազոտական

աշխատանքների 2017-2018 թվականների պլանով 2017 թվականին նախատեսված է կատարել 49 գիտահետազոտական աշխատանք (այսուհետ՝ ԳՀԱ-ներ), որոնցից 25 աշխատանք փոխանցվել է 2016 թվականից, 24 աշխատանք՝ 2017 թվականից:

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2017 թվականի հունիսի 20-ի «2017-2018 թվականներին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծավալների բաշխման մասին» թիվ 164 հրամանով (այսուհետ՝ Թիվ 164 հրաման) նախատեսված է 49 ԳՀԱ-ների ֆինանսավորում՝ 388 114,7 հազ. ռուբլի գումարի չափով, այդ թվում՝ 2017 թվականին՝ 282 048,6 հազ. ռուբլի, 2018 թվականին՝ 106 066,1 հազ. ռուբլի:

Այսպիսով, ԳՀԱ-ների ֆինանսավորման՝ Թիվ 164 հրամանով նախատեսված ծավալը (282 048,6 հազ. ռուբլի) ԳՀԱ-ների համար Միության բյուջեով նախատեսված ծավալից (310 908,3 հազ. ռուբլի) պակաս է 28 859,7 հազ. ռուբլի գումարի չափով: Դրանով իսկ Հանձնաժողովի գործունեությունն ուղղված չէ ԳՀԱ-ների համար հատկացվող միջոցների արդյունավետ պլանավորմանը, ինչը, ըստ տարվա արդյունքների, չօգտագործված մնացորդների գոյացման պատճառ է:

Կարգին համապատասխան՝ նախահաշվային մեթոդի հիման վրա ԳՀԱ-ների արժեքը ներառում է աշխատանքի վարձատրության, սոցիալական հատկացումների, նյութերի համար կատարվող ծախսումները, այլ ուղղակի ծախսումներ, վերադիր ծախսեր, շահույթ: Աշխատանքի վարձատրության ծախսերը սահմանվում են գիտության ոլորտում աշխատանքների կատարման շարունակականությունը, մասնագետների թվաքանակը, միջին աշխատավարձը բազմապատկելու միջոցով:

Դրանով իսկ պայմանագրի գինն ուղղակիորեն կախված է դրա կատարման ժամկետներից եւ անհրաժեշտ մասնագետների թվաքանակից, որոնց սահմանման նորմերը Կարգով նախատեսված չեն: Պայմանագրի գինը հաշվարկելիս նախահաշվային մեթոդի հիման վրա Հանձնաժողովի դեպարտամենտների

կողմից ինքնուրույն սահմանվում են անհրաժեշտ մասնագետների թվաքանակը եւ աշխատանքների կատարման ժամանակահատվածը:

Աուդիտի արդյունքում պարզվել է, որ 3 ԳՀԱ-ների մասով աշխատանքների կատարման կիրառված ժամկետը պայմանագրի գինը հաշվարկելիս 2 անգամ գերազանցում է աշխատանքների կատարման՝ ծանուցագրերով եւ կնքված պայմանագրերով նախատեսված ժամկետը («Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարան» դաշնային բյուջետային հաստատության հետ 2017 թվականի սեպտեմբերի 19-ի պայմանագիր՝ 6 636,6 հազ. ռուբլի գումարի չափով, «Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր վերլուծական կենտրոն» ԻՈԱԿ-ի հետ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի պայմանագիր՝ 7 500,0 հազ. ռուբլի գումարի չափով, «Ցկյանս կրթության ինստիտուտ» ԻՈԱԿ-ի հետ 2017 թվականի սեպտեմբերի 29-ի պայմանագիր՝ 6 100,0 հազ. ռուբլի գումարի չափով): Արդյունքում աշխատանքների արժեքների տարբերությունը կազմել է 4 437,2 հազ. ռուբլի:

2017 թվականին 42 պայմանագրերով կատարվել են 323 307,4 հազ. ռուբլի ընդհանուր գումարի չափով ԳՀԱ-ներ, որոնցից աշխատանքների ծավալը 2017 թվականի համար 237 576,9 հազ. ռուբլի է, 2018 թվականի համար՝ 85 730,5 հազ. ռուբլի:

2016-2017 թվականներին եւ 2018 թվականի 1-ին կիսամյակում ԳՀԱ-ների պատվիրատուները Հանձնաժողովի 20 դեպարտամենտներն են եղել: Ընդ որում, 2 դեպարտամենտ ԳՀԱ-ների գնմանը չի մասնակցել (Մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման դեպարտամենտը, Աշխատանքային միգրացիայի եւ սոցիալական պաշտպանության դեպարտամենտը):

2017 թվականին ԳՀԱ-ների կատարման 42 պայմանագրերից 16-ի դեպքում (35 %) մատակարարները թույլ են տվել պարտավորությունների կատարման ժամկետների խախտումներ: Ընդ որում, դեպարտամենտներն ինքնուրույն որոշումներ են կայացրել տուժանք ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Այսպես՝ չի գանձվել Հանձնաժողովի եւ «Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման նախարարության արտաքին առեւտրի համառուսական ակադեմիա» ՊՀ-ի միջեւ 2016 թվականի օգոստոսի 10-ի՝ 6 500,0 հազ. ռուբլի գումարի չափով պայմանագրի տուժանքը՝ աշխատանքների կատարման ժամկետը 35 օրացուցային օրով խախտելու համար:

«Եվրասիական տնտեսական միության թվային տարածքի ձեւավորման ընդհանուր մոտեցումների վերաբերյալ առաջարկությունների մշակում» թեմայով ԳՀԱ-ի համար Հանձնաժողովի եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի) միջեւ 2016 թվականի նոյեմբերի 14-ին կնքված 19 000,0 հազ. ռուբլի գումարի չափով պայմանագրով Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթը խախտելով՝ պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար տուգանային պատժամիջոցներ նախատեսված չեն: Արդյունքում Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել տուժանքը հաշվարկել ԳՀԱ-ները ոչ ժամանակին՝ 30 օրացուցային օր ուշացմամբ կատարելու համար:

Արարողակարգի եւ կազմակերպական ապահովման դեպարտամենտին (այսուհետ՝ Արարողակարգի դեպարտամենտ) վերապահվել է պլանավորվող ԳՀԱ-ների բոլոր հայտերի ուսումնասիրումը՝ սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասով, այդ թվում՝ այն ԳՀԱ-ների, որոնց պատվիրատուն Արարողակարգի դեպարտամենտն է, ինչը ոչ բավարար վերահսկողության դեպքում կարող է շահերի բախման ռիսկերի հանգեցնել:

Այսպես՝ տվյալ դեպարտամենտի կողմից «Եվրասիական ինտեգրման գործընթացներին Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) գործարար համայնքների ներգրավմանը նպաստող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ռազմավարությունների եւ ծրագրերի շրջանակներում ԵԱՏՄ գործարար համայնքների համար ինտեգրացիոն դիրքերի եւ ինտեգրացիոն մեխանիզմների վերլուծություն եւ մշակում» թեմայով ԳՀԱ-ի կատարման համար 2017 թվականի հոկտեմբերի 30-ին 14 979,0 հազ. ռուբլի գումարի չափով պայմանագիր է կնքվել «Ինտեգրացիոն հետազոտությունների եւ

հաղորդակցության եվրասիական կենտրոն» ոչ առեւտրային գործընկերության հետ:

Նշված պայմանագրի գնի հաշվարկն իրականացվում է՝ ելնելով թեմայի կատարման ժամկետից, որը հավասար է 9 ամսվա: Ընդ որում, պայմանագրի պայմաններով ԳՀԱ-ների կատարման ժամկետները կազմել են 2 ամսից պակաս: Պայմանագրով ԳՀԱ-ների կատարման արժեքը 2 անգամ գերազանցում է 2017 թվականի արդյունքներով կնքված պայմանագրերով ԳՀԱ-ների միջին գինը (7 000,0 հազ. ռուբլիով):

Տվյալ աշխատանքի արդյունքների մասին հաշվետվության մեջ կատարողները նշված չեն, ինչը ԳՕՍՏ 7.32-2001 «Միջպետական ստանդարտ: Տեղեկատվության, գրադարանային եւ հրատարակչական գործի մասով ստանդարտների համակարգ: Գիտահետազոտական աշխատանքի մասին հաշվետվություն: Ձեւակերպման կառուցվածք եւ կանոններ»-ի խախտում է համարվում:

2017 թվականի համար «Հիմնական միջոցների գնում» հոդվածով Հանձնաժողովի համար նախատեսվել է 52 000,0 հազ. ռուբլի: Փոփոխությունները հաշվի առնելով՝ ֆինանսավորումն ավելացել է 40 327,8 հազ. ռուբլով եւ կազմել է 92 327,8 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 89 640,9 հազ. ռուբլի (97 %), մնացորդը՝ 2 686,9 հազ. ռուբլի (3 %):

2017 թվականին Հանձնաժողովի կողմից 31 պայմանագրերով ձեռք են բերվել 89 681,0 հազ. ռուբլի գումարի չափով հիմնական միջոցներ, որոնցից մեքենաներ եւ սարքավորումներ՝ 73 013,3 հազ. ռուբլի, արտադրական եւ տնտեսական գույք՝ 16 667,7 հազ. ռուբլի:

Այսպես՝ «Էնտում-ՍՄ» ՍՊԸ-ի հետ 2017 թվականի հունիսի 1-ի պայմանագրով Հանձնաժողովի կողմից ձեռք են բերվել 26 445,0 հազ. ռուբլի գումարի չափով հիմնական միջոցներ (250 անձնական համակարգիչ, 40 նոթբուք, 30 մոնոբլոկ, 4 սքաներ): Ինչպես նաեւ «ԼԱՆԻՏ» ՓԲԸ-ի հետ 2017 թվականի հունիսի 14-ի 12 950,4 հազ. ռուբլի գումարի չափով պայմանագրով ձեռք են բերվել 110 Apple iPhone

6s բջջային հեռախոս, 110 Apple iPad 9,7 պլանշետ, 30 կուլեր, 70 թեյնիկ, 15 սրճեփ մեքենա, 5 բրոշյուրավորող սարք:

Միեւնույն ժամանակ հիմնական միջոցների ձեռքբերման համար պլանավորվող ծախսերի նախնական հաշվարկի համաձայն՝ 2017 թվականին Միության բյուջեն ձեւավորելիս Հանձնաժողովի կողմից ներկայացված 68 085,3 հազ. ռուբլի գումարով պլանավորվել էր ձեռք բերել 95 անձնական համակարգիչ, 144 նոթբուք, 10 բջջային հեռախոս, 10 պլանշետ, 5 սրճեփ մեքենա, 3 բրոշյուրավորող սարք: Մոնոբլոկների, սքաներների, կուլերների, թեյնիկների ձեռքբերում չի պլանավորվել: Բյուջեի 2017 թվականի նախագծի քննարկման եւ համաձայնեցման ընթացքում նշված ծախսերը օպտիմալացվել են մինչեւ 52 000,0 հազ. ռուբլի՝ հաշվի առնելով Միության անդամ պետությունների ֆինանսական հնարավորությունները:

Այսպիսով, ձեռքբերված հիմնական միջոցների քանակը չի համապատասխանում Հանձնաժողովի բյուջետային նախահաշիվը ձեւավորելիս պլանավորած քանակի հետ: Հիմնական միջոցների օբյեկտները ձեռք են բերվել՝ հաշվի առնելով Բյուջեի մասին հիմնադրույթի 35-րդ կետին համապատասխան միեւնույն նպատակներին ուղղվող՝ 2016 թվականի մնացորդների հաշվին «Հիմնական միջոցների գնում» հոդվածով ֆինանսավորման ավելացումը: Միության մարմիններին հիմնական միջոցներով ապահովելու նորմերը կանոնակարգող՝ Միության նորմատիվ իրավական ակտերը բացակայում են:

2017 թվականին հիմնական միջոցների ձեռքբերման բաց մրցույթներ անցկացնելու մասին ծանուցագրերի վերլուծությունը ցույց է տվել, որ «Պայմանագրի գին» չափանիշով գնման մասնակցության հայտերը համադրելիս սահմանվում է նշանակալիության մեծություն՝ 50 %:

Հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չեն հայտերի գնահատման չափանիշների նշանակալիության սահմանային մեծությունները: Ընդ որում, իրականացվում է կոնկրետ բնութագրեր ունեցող ապրանքների գնում,

որոնց վրա գնահատման ոչ գնային չափանիշները փաստացի չեն ազդում: Այս առնչությամբ ոչ գնային չափանիշների նշանակալիության բարձր մեծությունը հակասում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերման համար դրամական միջոցների տնտեսապես արդյունավետ ծախսման՝ Գնումների մասին հիմնադրույթի 4-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված սկզբունքին:

Աճուրդի անցկացման մասին ծանուցագրի 19-րդ կետի խախտմամբ «Նեֆտետեքս» ՍՊԸ-ի հետ 3 781,2 հազ. ռուբլի գումարի չափով պայմանագիրը կնքվել է սահմանված ժամկետների՝ 14 աշխատանքային օր խախտմամբ:

«Այլ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում» հոդվածով 2017 թվականին հատկացվել է 3 217 103,5 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 2 917 942,2 հազ. ռուբլի (90,7 %), մնացորդը՝ 299 161,3 հազ. ռուբլի (9,3%): Տվյալ հոդվածը ներառում է հետեյալ ենթահոդվածները՝ տրանսպորտային ծառայությունների, կոմունալ ծառայությունների, վարձակալության, կապի ծառայությունների, այլ աշխատանքների եւ ծառայությունների վճարում:

Կապի ծառայությունների ծախսերը կազմել են 41 395,0 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 89 %-ը: 2017 թվականին կատարվել է բջջային կապի, տեղական, քաղաքային, ներգոտային, միջքաղաքային եւ միջազգային կապի, հատուկ եւ գաղտնի կապի, ֆելդեգերական, փոստային-հեռագրային կապի ծառայությունների վճարում:

2017 թվականին Հանձնաժողովի կողմից խախտվել են կապի ծառայությունների մատուցման հետեյալ պայմանագրերի մասով վճարումների ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնության պետական ֆելդեգերական ծառայության հետ 2014 թվականի նոյեմբերի 19-ի պայմանագրի մասով՝ 782,2 հազ. ռուբլի. «Կենտրոնական հեռագրատուն» ՀԲԸ-ի հետ 2012 թվականի հունիսի 7-ի պայմանագրի մասով՝ 653,4 հազ. ռուբլի:

Կոմունալ ծառայությունների ծախսերը կազմել են 3 187,6 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 69 %-ը:

Գույքի պահպանման աշխատանքների, ծառայությունների ծախսերը կազմել են 372 134,8 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 88,1 %-ը:

Տրանսպորտային ծառայությունների ծախսերը կազմել են 600 369,5 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 95 %-ը:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հանձնաժողովի հաշվեկշռում եղել է 107 միավոր ավտոտրանսպորտային միջոց, մեկ տարվա ընթացքում դրանից չի շահագործվել 21-ը՝ 39 749,6 հազ. ռուբլի արժողությամբ: Տրանսպորտային ծառայությունների մատուցումն իրականացվել է «Ծառայողական շենքերի կառավարում» ԲԲԸ-ի կողմից՝ Հանձնաժողովին պատկանող տրանսպորտային միջոցներով (2016 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 84 պայմանագիր):

Չնայած սեփական չօգտագործվող տրանսպորտային միջոցների առկայությանը՝ Հանձնաժողովի կողմից տրանսպորտային ծառայությունների համար ծախսվել է 10 282,9 հազ. ռուբլի՝ «Ծառայողական շենքերի կառավարում» ԲԲԸ-ին պատկանող 6 տրանսպորտային միջոցների ներգրավմամբ (2016 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85 պայմանագիր): Տրանսպորտային ծառայությունների բարձր սակագնի հետ կապված՝ նշված պայմանագիրը լուծվել է 2017 թվականի սկզբին:

Գույքն օգտագործելու համար վարձակալության վճարի ծախսերը կազմել են 1 193 019,6 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 87 %-ը:

Ոչ բնակելի (գրասենյակային) տարածքների վարձակալությունն իրականացվել է 2012 թվականին կնքված՝ վարձակալության 4 երկարաժամկետ պայմանագրերի հիման վրա: 2017 թվականին ոչ բնակելի (գրասենյակային) տարածքների վարձակալության ծախսերը կազմել են 992 274,8 հազ. ռուբլի:

Հանձնաժողովի պաշտոնատար անձանց եւ Կոլեգիայի անդամների կողմից բնակելի տարածքների վարձակալության նպատակով 2017 թվականին ծախսվել է 202 437,2 հազ. ռուբլի:

«Այլ աշխատանքներ, ծառայություններ» հոդվածով ծախսերը կազմել են 682 315,0 հազ. ռուբլի կամ տվյալ հոդվածով բյուջետային ելեւմտացույցի 94,4 %-ը: «Այլ աշխատանքներ, ծառայություններ» հոդվածով առավելագույն տեսակարար կշիռ են կազմում բժշկական սպասարկման ծախսերը (31,2 %), գործուղման ծախսերը (17,4 %), տեղեկատվայնացման (10,3%), պահպանության ծառայությունների (11,1 %), թարգմանության ծառայությունների (8,2 %) ծախսերը:

«Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի եւ Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման ծախսեր» հոդվածով 2017 թվականին հատկացվել է 31 427,9 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 20 385,9 հազ. ռուբլի (65 %), մնացորդը՝ 11 042,0 հազ. ռուբլի (35 %):

2017 թվականին անցկացվել է 19 միջոցառում՝ Բարձրագույն խորհրդի 2 արտագնա նիստ (Ղրղզստանի Հանրապետություն եւ Ռուսաստանի Դաշնություն). Միջկառավարական խորհրդի 4 արտագնա նիստ (Ղրղզստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն (2 միջոցառում) եւ Ղազախստանի Հանրապետություն). Հանձնաժողովի խորհրդի 13 նիստ:

Գնումների ոլորտում Հանձնաժողովի գործունեության վերլուծությունը ցույց է տվել հետեւյալը:

Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնման կարգը կանոնակարգվել է Հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունվարի 25-ի թիվ 5 որոշմամբ հաստատված՝ Հանձնաժողովի կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվերների տեղադրման եւ պայմանագրերի կնքման մասին հիմնադրույթով (այսուհետ՝ Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթ), որով նախատեսված չէ գնումների պլանավորում: Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնումների պլան ֆինանսական տարվա համար չի կազմվում՝ բացառությամբ ինտեգրված տեղեկատվական համակարգի

գործունեության ու զարգացման ապահովմանը եւ ԳՀԱ-ներին ուղղված ծախսերի:

Գնումների պլանավորման բացակայությունը չի ապահովում գնումների կատարման սկզբունքի իրագործումն ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերման համար դրամական միջոցների տնտեսապես արդյունավետ ծախսումը եւ պատվիրատուի ծախքերի կրճատմանն ուղղված միջոցների իրագործումն ապահովելու մասով (Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթի 4-րդ կետի 3-րդ ենթակետ):

Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթով նախատեսված չեն մատակարարների համար կիրառվող չափանիշները եւ ծանուցագրի ձեւը: Գնումներ կատարելիս դեպարտամենտներն ինքնուրույն են սահմանում չափանիշները եւ դրանց արժեքները:

Համանման ծառայությունների գնման ժամանակ Հանձնաժողովի դեպարտամենտների կողմից կիրառվում են չափանիշների տարբեր արժեքներ: Օրինակ, 2017 թվականին ԳՀԱ-ների գնման ժամանակ «Պայմանագրի գին» չափանիշի արժեքները սահմանվել են 15 %-ից սկսած՝ ըստ թիվ 592 ծանուցագրի, մինչեւ 40 %՝ ըստ թիվ 583 ծանուցագրի:

Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթի 18-րդ կետին համապատասխան՝ պայմանագիրը պետք է պարունակի էական պայմաններ, այդ թվում՝ պայմանագրի առարկան, պայմանագրի գինը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, հաշվարկների կարգն ու ժամկետները, ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, դրանց ընդունման ժամկետներն ու կարգը, կողմերի պատասխանատվությունը, պայմանագրի փոփոխման եւ լուծման դեպքերն ու կարգը: Տիպային պայմանագրի ձեւը եւ դրա կնքման ժամկետները նախատեսված չեն:

ԳՀԱ-ների շրջանակներում կնքվող պայմանագրերի պայմանների եւ բովանդակության աուդիտը ցույց է տվել, որ կատարված աշխատանքների արդյունքների տրամադրման միասնական կարգը բացակայում է:

Այսպես՝ Տրանսպորտի եւ ենթակառուցվածքի, Մաքսային ենթակառուցվածքի, Տեխնիկական կանոնակարգման եւ հավատարմագրման, Սանիտարական, բուսասանիտարական եւ անասնաբուժական միջոցների, Առեւտրային քաղաքականության, Արդյունաբերական քաղաքականության, Վիճակագրության դեպարտամենտների կողմից կնքված պայմանագրերով նախատեսված է ԳՀԱ-ների կատարման մասին նախնական հաշվետվության (մեկ օրինակից) եւ դրա էլեկտրոնային տարբերակի տրամադրում: ԳՀԱ-ների կատարման այլ պայմանագրերով վերը նշված պայմանը նախատեսված չէ:

Մինչդեռ ԳՀԱ-ների կատարման մասին նախնական հաշվետվության տրամադրման պայմանագրերում պայմանը թույլ է տալիս պատվիրատուին նշել աշխատանքի թերությունները նախքան դրա կատարման ժամկետների ավարտը եւ նվազեցել այն անորակ կատարելու ռիսկերը:

Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթով սահմանված չեն մրցույթի մասնակցության հայտերի ուսումնասիրման ժամկետները, ինչպես նաեւ հայտերի գնահատման եւ համադրման ժամկետները: Արդյունքում դեպարտամենտները տարբեր ժամանակներ են ծախսում դրանց ուսումնասիրման համար, ինչն առանձին դեպքերում հանգեցնում է գնումների ընթացակարգի ձգձգման:

2017 թվականին Դատարանի գործունեության ապահովման համար նախատեսվել են 347 536,6 հազ. ռուբլի գումարի չափով միջոցներ, դրամարկղային ծախսերը կազմել են 304 682,0 հազ. ռուբլի կամ 87,7 % (Հավելված թիվ 2):

2017 թվականի արդյունքներով Դատարանի կողմից չեն օգտագործվել 42 854,6 հազ. ռուբլի (12,3 %) գումարի չափով միջոցներ, որոնցից հիմնական մասը բաժին է ընկնում վարձակալության վճարին՝ 13 906,1 հազ. ռուբլի (32,4 %), անձնակազմին այլ վճարումների եւ աշխատանքի վարձատրության վճարումների հավելագրումների համար հատկացված ծախսերին՝ 10 115,8 հազ. ռուբլի (23,6 %),

տրանսպորտային ծառայություններին՝ 6 271,7 հազ. ռուբլի (14,6 %), կապի ծառայություններին՝ 6 125,9 հազ. ռուբլի (14,3 %): Ինչն առաջին հերթին կապված է Դատարանի հաստիքացանկի համալրված չլինելու հետ:

Դատարանի ծախսերի կառուցվածքում հիմնական մասը (84,6 %) բաժին է ընկնում ծախսային հետեւյալ հոդվածներին (ենթահոդվածներին)՝ «Աշխատավարձ»՝ 126 366,1 հազ. ռուբլի (41,5 %), «Տրանսպորտային ծառայություններ»՝ 50 819,1 հազ. ռուբլի (16,7 %), «Անձնակազմին այլ վճարումների եւ աշխատանքի վարձատրության վճարումների հավելագրումների համար հատկացված ծախսեր»՝ 43 954,8 հազ. ռուբլի (14,4 %), «Այլ աշխատանքներ եւ ծառայություններ»՝ 36 700,9 հազ. ռուբլի (12 %):

«Անձնակազմին վճարելու համար հատկացված ծախսեր՝ Միության մարմինների կողմից իրենց գործառույթների կատարումն ապահովելու նպատակներով» հոդվածով հատկացվել է 180 436,7 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 170 320,9 հազ. ռուբլի (94,4 %): 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ չօգտագործված միջոցների մնացորդը կազմել է 10 115,8 հազ. ռուբլի (5,6 %):

Բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 81 որոշմամբ Դատարանի հաստիքների ընդհանուր թվաքանակը սահմանվել է 64 հաստիքային միավոր:

Դատարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 39 մարդ (61 %), 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 46 մարդ (71,8 %), 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 45 մարդ (70,3 %): Այսպիսով, 2016-2017 թվականներին Դատարանի հաստիքացանկն ամբողջությամբ համալրված չէ:

2017 թվականին մրցութային հանձնաժողովի կողմից անցկացվել է Դատարանի աշխատակիցների 21 թափուր պաշտոններ զբաղեցնելու մեկ մրցույթ:

Մրցույթն անցկացվել է 2017 թվականի փետրվարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 3-ն ընկած ժամկետներում, որի արդյունքներով պաշտոնում նշանակվել է 7 թեկնածու:

Անհրաժեշտ է նշել, որ Դատարանի նախագահի 2015 թվականի փետրվարի 25-ի թիվ 4 հրամանով հաստատված՝ Դատարանի քարտուղարությունում թափուր պաշտոններ զբաղեցնելու մրցույթի անցկացման կարգով սահմանված չեն պահանջներ մրցութային հանձնաժողովի նիստերի արձանագրության բովանդակության նկատմամբ: Մրցութային հանձնաժողովի նիստի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 5 արձանագրությունը չի պարունակում Մրցութային հանձնաժողովի անդամների՝ յուրաքանչյուր թեկնածուի թեկնածության համար քվեարկության արդյունքների մասին տեղեկատվություն, Մրցույթի անցկացման հիմնական կանոնների 2-րդ կետով սահմանված պահանջներին նրանց համապատասխանության մասին եզրահանգումներ, ինչը հանգեցնում է նրան, որ Դատարանի նախագահին մրցույթի արդյունքների մասին տրամադրվում են ոչ ամբողջական տեղեկություններ, որոնք հիմք են թեկնածուին պաշտոնում նշանակելու մասին որոշում կայացնելու համար:

Մրցութային հանձնաժողովի նիստին թեկնածուները չեն մասնակցել տեսահամաժողովին մասնակցելու միջոցով, ինչի կիրառման հնարավորությունը նախատեսված է Մրցույթի անցկացման կարգի 20-րդ կետով:

2018 թվականի լրացած ժամանակահատվածում թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթներ չեն անցկացվել:

Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին հիմնադրույթի (Միության մասին պայմանագրի թիվ 32 հավելված) 43-րդ կետով նախատեսված է, որ Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են գտնվելու պետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով տվյալ հիմնադրույթի նորմերը:

Դատարանի նախագահի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 8 հրամանով հաստատված՝ Դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոններով (այսուհետ՝ Դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոններ) նախատեսված է լրացուցիչ վճարվող արձակուրդի տրամադրում ոչ ավելի, քան 14 օրացուցային օր ժամկետով: Սահմանված է նաեւ, որ ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատավայրից բացակայելու ընթացքում պահպանվում է Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ ապարատի աշխատակիցների ամսական դրամական բավարարումը:

Լրացուցիչ վճարվող արձակուրդի տրամադրումը, ինչպես նաեւ վաստակի պահպանումը ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չեն: Հետեւաբար նշված նորմերի առկայությունը Դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոններում չի համապատասխանում վերը նշված հիմնադրույթի 43-րդ կետի պահանջներին:

Ստուգվող ժամանակահատվածում ընտանեկան-կենցաղային եւ այլ հարգելի պատճառներով լրացուցիչ վճարվող արձակուրդներ չեն տրամադրվել, ամսական դրամական բավարարման վճարում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում չի իրականացվել: Մինչդեռ նշված նորմերի առկայությունը Դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոններում Միության բյուջեով աշխատանքի վարձատրության համար նախատեսվող միջոցների անօրինական օգտագործման ռիսկեր է ստեղծում:

Դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոնների 12-րդ կետով սահմանված է, որ Դատարանի դատավորներին, պաշտոնատար անձանց եւ ապարատի աշխատակիցներին կարող է տրամադրվել լրացուցիչ չվճարվող արձակուրդ: Ընդ որում, այդ արձակուրդի սահմանային տեւողությունը սահմանված չէ:

Դատարանի նախագահի 2015 թվականի մարտի 5-ի թիվ 5 հրամանով հաստատված՝ Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ

աշխատակիցների նյութական խթանման մասին հիմնադրույթին (այսուհետ՝ Հիմնադրույթ) համապատասխան՝ նյութական խթանումն իրականացվում է համապատասխանաբար Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների միջեւ հավասար վճարումներով:

Նշված հիմնադրույթի 2-րդ կետով սահմանված է, որ նյութական խթանում է հանդիսանում ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարման մոտիվացման բարձրացմանը եւ ծառայողական գործունեության արդյունքների բարելավմանն ուղղված միջոցների ամբողջությունը:

Մինչդեռ աշխատանքի վարձատրության ֆոնդում գոյացած խնայողությունը ամբողջ ծավալով եւ հավասար վճարումներով ուղղելու գործող կարգով փաստացի նախատեսվում է նյութական խթանումների վճարման պարտավորություն, եւ հաշվի չեն առնվում ծառայողական գործունեության արդյունքները, չեն սահմանվում դրա արդյունքների այն չափանիշներն ու ցուցանիշները, որոնք հիմք են նյութական խթանման համար:

2017 թվականին աշխատանքի վարձատրության ֆոնդի խնայողությունը կազմել է 18 750,9 հազ. ռուբլի (աշխատանքի վարձատրության տարեկան ֆոնդի 14,8 %-ը), որից նյութական խթանմանն է ուղղվել 18 090,2 հազ. ռուբլի:

Չորրորդ եռամսյակում աշխատանքի վարձատրության ֆոնդի խնայողության ծավալի մասին տեղեկությունները ներկայացվել են 2017 թվականի դեկտեմբերի 26-ին՝ Նյութական խթանման կարգի 4-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ (եռամսյակի ամսվա 15-ից ոչ ուշ): Համապատասխանաբար Դատարանի նախագահի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Նյութական խթանման մասին» թիվ 337-կ հրամանը տրվել է Նյութական խթանման կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ (եռամսյակի ամսվա 20-ից ոչ ուշ):

Այսպիսով, 2016-2017 թվականներին Դատարանի հաստիքացանկի համալրված չլինելու առնչությամբ գոյացել է աշխատանքի վարձատրության ֆոնդի՝ նյութական խթանմանն ուղղված զգալի խնայողություն:

«Հիմնական միջոցների գնում» հոդվածով հատկացվել է 4 056,2 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 2 691,8 հազ. ռուբլի (66,4%), մնացորդը՝ 1 364,4 հազ. ռուբլի (33,6 %):

Կնքված 10 պայմանագրերի հիման վրա 2017 թվականին Դատարանի կողմից ձեռք են բերվել 2 691,8 հազ. ռուբլի գումարի չափով հիմնական միջոցներ (ՀԲ-մոնիտորներ, սրճեփ մեքենաներ, նոթբուքեր, համակարգային բլոկներ (ԱԷՀՄ-ներ), պահարաններ, XEROX ԲՖՍ-ներ, սքաներ, անխափան սնուցման աղբյուրներ, գորգեր):

Դրանցից աուդիտի իրականացման պահին չեն օգտագործվել 10 ՀԲ-մոնիտորներ եւ 3 համակարգային բլոկներ՝ 126,6 հազ. ռուբլի ընդհանուր արժեքով:

«Այլ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում» հոդվածով հատկացվել է 163 043,8 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 131 669,4 հազ. ռուբլի (80,8 %), մնացորդը՝ 31 374,4 հազ. ռուբլի (9,3 %): Տվյալ հոդվածի շրջանակներում կատարվել է տրանսպորտային ծառայությունների, կոմունալ ծառայությունների, վարձակալության, կապի ծառայությունների, այլ աշխատանքների եւ ծառայությունների վճարում:

Գույքն օգտագործելու համար վարձակալության վճարի ծախսերը կազմել են 27 596,9 հազ. ռուբլի կամ հատկացված գումարի 66,5%-ը: 2018 թվականի հունվարի Ի-ի դրությամբ II բնակելի տարածքների վարձակալության համար Դատարանի կողմից պայմանագրեր են կնքվել «Դիպսերվիս» ՊՀ-ի հետ:

Ծառայողական բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերի նկատմամբ ընտրանքային վերահսկողության արդյունքներով վարձավճարի փաստացի չափերի՝ սահմանված սահմանային չափերից գերազանցում չի հայտնաբերվել:

Դատարանի եւ «Գլխավոր տնտեսական վարչություն» ՊՀ-ի միջեւ 2017 թվականի հունվարի 24-ի պայմանագրի համաձայն՝ իրականացվում է

հետեւյալ հասցեում գտնվող շինության անհատույց վարձակալություն՝ Բելառուսի Հանրապետություն, ք. Մինսկ, Կիրովի փ., 5-րդ շ.:

Խախտելով տվյալ պայմանագրի 3.1 կետի 3.1.1 ենթակետը եւ 4.1 կետը՝ 2017 թվականին անշարժ գույքի պահպանման եւ ընթացիկ վերանորոգման կարգը կարգավորող պայմանագիր չի կնքվել:

Գույքի պահպանման աշխատանքների եւ ծառայությունների ծախսերը կազմել են 3 236,7 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 66,7 %-ը:

Դատարանի եւ «Գլխավոր տնտեսական վարչություն» ՊՀ-ի միջեւ 2015 թվականի փետրվարի 1-ին կնքվել է անշարժ գույքի շահագործման եւ պահպանման ծառայությունների մատուցման պայմանագիր: 2017 թվականին պայմանագրի շրջանակներում կատարվել է անշարժ գույքի ներքին տարածքների, ԸՕՏ (ընդհանուր օգտագործման տարածքների) եւ պատշգամբների վերանորոգում՝ 185,3 հազ. ռուբլի գումարի չափով:

Հարկ է նշել, որ ընթացիկ վերանորոգում կատարելու համար կազմվել է թերությունների ակտ, որը չի համապատասխանում Բելառուսի Հանրապետության ճարտարապետության եւ շինարարության նախարարության 2011 թվականի ապրիլի 29-ի թիվ 4 որոշմամբ սահմանված ձեւին, որում բացակայում են թերությունների նկարագրությունը, դրանց գտնվելու վայրերը, ինչն իր հերթին բարդացնում է վերանորոգման կատարված աշխատանքների եւ դրանց ծավալների հաստատումը:

Դատարանի շենքի պահպանման հաշիվ-ապրանքագրերը կազմվել են պայմանագրի համաձայն եւ բաղկացած են երկու մասից՝ կոմունալ եւ շահագործման ծառայությունների դիմաց ծախսերի փոխհատուցում:

«Գլխավոր տնտեսական վարչություն» ՊՀ-ի կողմից ներկայացվող ակտը հաստատում է միայն շինության պահպանման շահագործման-տեխնիկական ծառայությունների տրամադրման փաստը՝ առանց նշելու դրանց ծավալը: Կոմունալ ծառայությունների մասով մատուցված ծառայությունների ակտ չի կազմվում, ինչը

չի համապատասխանում 2015 թվականի փետրվարի 1-ի թիվ 01/02 պայմանագրի 3.1 կետի պայմաններին:

Շինությունների պահպանման մասով շահագործման ծառայությունների հաշիվ-ապրանքագրերում 1 քառ. մ ընդհանուր օգտագործման տարածքի (ԸՕՏ) սպասարկման սակագինը սահմանվել է 4,72 բելառուսական ռուբլի գումարի չափով: Պայմանագրերում բացակայում է վերը նշված սակագնի պարզաբանումն ու հիմնավորումը:

Դատարանի կողմից «Գլխավոր տնտեսական վարչություն» ՊՀ-ին 2018 թվականի մայիսի 7-ի թիվ 5-1-8/226 նամակով հարցում է ուղարկվել շահագործման ծառայությունների հաստատված սակագնի մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ, որի պատասխանը Դատարանը 4 ամսվա ընթացքում չի ստացել:

Այլ աշխատանքների, ծառայությունների ծախսերը կազմել են 36 700,9 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեմտացույցի 97,1 %-ը:

Գործուղման ծախսերի աուդիտի ընթացքում պարզվել է, որ 99 նախնական հաշվետվությունների մասով բացակայում են սահմանային հսկողության մարմինների՝ պետական սահմանը հատելու ամսաթվի մասին նշումով անձնագրի էջերի պատճենները, դրանով իսկ չեն պահպանվել Դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոնների 9.4 բաժնի 1-ին կետի պահանջները:

«Հաշվետու անձանց հետ հաշվարկներ» թիվ 3 գործառնությունների մատյանի մեջ չեն նշվել տեղեկություններ՝ ամսվա սկզբի եւ վերջի դրությամբ դեբիտորական եւ կրեդիտորական պարտքի առկայության մասին: Պարտքերի մասին տեղեկությունները Դատարանը ձեւավորում է հետադարձ սալդոյի մատյաններում:

Գնումների ոլորտում Դատարանի գործունեության վերլուծությունը ցույց է տվել հետեւյալը:

Դատարանի նախագահի 2015 թվականի հունիսի 1-ի թիվ 13 հրամանով հաստատված՝ Դատարանի կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվերների տեղադրման, գնումների կազմակերպման եւ պայմանագրերի կնքման հիմնադրույթով (այսուհետ՝ Գնումների մասին հիմնադրույթ) նախատեսված չէ Գնումների պլանի ձեւը, որը ձեւակերպվում է կամայական ձեւով:

2017 թվականի Գնումների պլանի ձեւավորման եւ կատարման վերլուծությունը ցույց է տվել, որ Դատարանի կողմից կատարվել է առանձին տեսակների ապրանքների եւ ծառայությունների գնում՝ Գնումների պլանով նախատեսված քանակից պակաս (համակարգային բլոկ, պլանշետներ, գրասենյակային կահույք, թափոնների դուրսբերման եւ փոխանցման ծառայություններ, ընթացիկ վերանորոգում): Դատարանի կողմից Գնումների պլանի կատարման դիտանցում չի իրականացվում:

Ընդ որում, կապի ծառայությունների, տրանսպորտային եւ կոմունալ ծառայությունների, շինությունների վարձակալության, գույքի պահպանման մասով գնումների պլանավորումը կատարվել է՝ հաշվի առնելով միայն մոտավոր արժեքը, այսինքն՝ առանց նշելու անհրաժեշտ ծավալը:

Խախտելով Գնումների մասին հիմնադրույթի 5-րդ կետը՝ Դատարանում բացակայում են բնակության համար նախատեսված բնակելի տարածքների վարձակալության այն 24 կնքված պայմանագրերի գների նախնական ուսումնասիրության, դիտանցման արդյունքները, համաձայն որոնց 2017 թվականին փոխանցվել է 27 596, 9 հազ. ռուբլի:

Գնումների պլանում պահանջարկի բացակայությունը քանակական արտահայտությամբ՝ նշելով ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) սկզբնական արժեքը, քանակական արտահայտությամբ ապրանքների, ծառայությունների, աշխատանքների պահանջարկը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերի բացակայությունը վկայում են գնումների ոչ արդյունավետ

պլանավորման մասին:

4-րդ նպատակ. Ստուգել բյուջետային հաշվառման եւ բյուջետային հաշվետվությունների հավաստիությունը:

Ի կատարումն Բյուջեի մասին հիմնադրույթի 38-րդ կետի՝ հաստատվել են Բյուջետային հաշվառման ընդհանուր սկզբունքները, որոնցով սահմանվում են բյուջետային հաշվառման միասնական մեթոդաբանությունը Միության մարմիններում եւ Միության մարմինների կողմից բյուջետային հաշվառման հաշիվների պլանի կիրառման միասնական կարգը:

Միության մարմինների կողմից Բյուջետային հաշվառման ընդհանուր սկզբունքների իրագործման նպատակով մշակվել եւ հաստատվել են հաշվառման քաղաքականությունների մասին հիմնադրույթներ (Հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 412 հրաման, Դատարանի նախագահի 2016 թվականի հունիսի 1-ի թիվ 2-ա հրաման):

Բյուջետային հաշվառման ընդհանուր սկզբունքներով նախատեսված՝ փաստաթղթաշրջանառության կանոններն ու գծապատկերը Դատարանի հաշվառման քաղաքականության մեջ չեն պարունակվում:

Անալիտիկ հաշվառման տվյալների՝ սինթետիկ հաշվառման հաշիվների շրջանառություններին եւ մնացորդներին չհամապատասխանելու փաստեր չեն հայտնաբերվել:

Միության մարմինների կողմից անցկացված՝ ակտիվների եւ պարտավորությունների գույքագրման արդյունքներով առաջնային հաշվառման փաստաթղթերի տվյալների եւ բյուջետային հաշվառման տվյալների միջեւ տարբերություններ չեն հայտնաբերվել:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Միության դեբիտորական պարտքը կազմել է 607 006,5 հազ. ռուբլի (ներառյալ Հանձնաժողովի վարչական տարածքների վարձակալության մասով 161 621,7 հազ. ռուբլի գումարի չափով երկարաժամկետ դեբիտորական պարտքը, «ՌՕԷԼ Կոնսալտինգ» ԲԸ-ի կողմից

պարտավորությունները ժամանակին չկատարելու հետ կապված 5 858,1 հազ. ռուբլի գումարի չափով ժամկետանց դեբիտորական պարտքը) եւ 2017 թվականի հունվարի 1-ի համեմատ ավելացել է 139 524,0 հազ. ռուբլով կամ 30 %-ով:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Միության կրեդիտորական պարտքը կազմել է 182 236,4 հազ. ռուբլի (երկարաժամկետ եւ ժամկետանց կրեդիտորական պարտք չկա)՝ ավելանալով 32 131,8 հազ. ռուբլով կամ 21 %-ով:

5-րդ նպատակ. Ստուգել Միության բյուջեի միջոցների հասցեականությունն ու նպատակային նշանակությունը:

Միության 2017 թվականի բյուջեի ծախսերի գերատեսչական կառուցվածքով սահմանվել են 2017 թվականին Հանձնաժողովի ծախսերի ծավալները՝ 7 270 758,0 հազ. ռուբլու չափով, Դատարանինը՝ 338 367,7 հազ. ռուբլու չափով:

Միության հաշիվներից Միության մարմինների հաշիվներին դրամական միջոցների փոխանցումն իրականացվել է Հանձնաժողովի կողմից՝ ամփոփ բյուջետային ելեմտացույցին համապատասխան՝ Միության բյուջեի հաշիվներին միջոցների մուտքագրման օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

2017 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից կատարվել է Միության մարմինների ծախսերի ֆինանսավորում՝ 7 440 055,8 հազ. ռուբլի գումարի չափով, որից Հանձնաժողովին՝ 7 109 200,8 հազ. ռուբլի, Դատարանին՝ 330 855,0 հազ. ռուբլի: Միության հաշիվներից Միության մարմինների հաշիվներին դրամական միջոցների փոխանցման ժամկետների խախտումներ չեն հայտնաբերվել:

Բյուջետային միջոցներն օգտագործվել են հաստատված բյուջետային ելեմտացույցներին համապատասխան:

6-րդ նպատակ. Գնահատել Միության բյուջեի միջոցների, Միության գույքի եւ մյուս ակտիվների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ֆինանսական ներդրումների) օգտագործման արդյունավետությունը հաշվետու ֆինանսական տարում:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հանձնաժողովի հաշվեկշռում եղել են 3 130 272,3 հազ. ռուբլի գումարի չափով ոչ ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝ մեքենաներ եւ սարքավորումներ՝ 1 087 512,7 հազ. ռուբլի. տրանսպորտային միջոցներ՝ 191 833,0 հազ. ռուբլի. արտադրական եւ տնտեսական գույք՝ 446 859,7 հազ. ռուբլի. ոչ նյութական ակտիվներ՝ 1 404 066,9 հազ. ռուբլի:

2017 թվականին Հանձնաժողովի կողմից ձեռք են բերվել 1 492 247,9 հազ. ռուբլի գումարի չափով ակտիվներ (հիմնական միջոցներ՝ 89 681,0 հազ. ռուբլի, ոչ նյութական ակտիվներ՝ 1 402 566,9 հազ. ռուբլի):

Խախտելով Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2012 թվականի հունիսի 27-ի թիվ 180 հրամանով հաստատված՝ Հանձնաժողովի հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների մուտքերի ու ելքերի եւ նյութական պաշարների դուրսգրման հարցերով հանձնաժողովի մասին հիմնադրույթի 1.4 կետը՝ հիմնական միջոցների ելքերի վերաբերյալ փաստաթղթերը քննարկվել են 2017 թվականի հոկտեմբերի 31-ին, այսինքն՝ սահմանված ժամկետից 13 օր ուշ:

2017 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 9 արձանագրության համաձայն՝ նշված Հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել հիմնական միջոցների օբյեկտների խմբերի դուրսգրման մասին ակտերով հիմնական միջոցների օբյեկտների դուրսգրման մասին (հիմնական միջոցների 179 օբյեկտների, այդ թվում՝ մոնիտորների, մոնոբլոկների, անձնական համակարգիչների, նոթբուքերի եւ այլ օրգտեխնիկայի):

Սակայն տվյալ հանձնաժողովի կողմից չեն սահմանվել դուրսգրման կոնկրետ պատճառները (մաշվածություն, վթար, խախտումներ շահագործման ժամանակ), ինչը նախատեսված է Հիմնական միջոցների մուտքերի ու ելքերի հարցերով հանձնաժողովի մասին հիմնադրույթի 3.3 կետով, եւ ինչը նպատակահարմար է նմանատիպ վնասվածքներով հիմնական միջոցների դուրս գրվող օբյեկտների մեծ քանակության դեպքում:

Ստուգվող ժամանակահատվածում Հանձնաժողովի գործերի կառավարման դեպարտամենտի տնօրենի կողմից կնքվել է 3 պայմանագիր՝ հիմնական միջոցների 610 օբյեկտների ուտիլիզացման վերաբերյալ, որոնցից 179 միավ. քանակով դուրս գրված հիմնական միջոցների վերաբերյալ դրանց ուտիլիզացման մասին որոշում չի ընդունվել: Գնումների մասին հիմնադրույթի 5-րդ կետով նախատեսված՝ Հիմնական միջոցների օբյեկտների ուտիլիզացման ծառայությունների մատուցման գնումներ իրականացնելու մասին որոշում չի ընդունվել:

Այսպիսով, Հիմնական միջոցների ելքերի ու մուտքերի հարցերով Հանձնաժողովի կողմից ընդունվել են հիմնական միջոցների դուրսգրման մասին որոշումներ, որոնցով նախատեսված չեն միջոցառումներ (այլ միջոցներ)՝ դուրս գրվող գույքի նկատմամբ հետագա գործողությունների մասով (ուտիլիզացում կամ իրացում):

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Դատարանի հաշվեկշռում եղել են 77 215,2 հազ. ռուբլի գումարի չափով ոչ ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝ մեքենաներ եւ սարքավորումներ՝ 11 843,8 հազ. ռուբլի. տրանսպորտային միջոցներ՝ 47 773,9 հազ. ռուբլի. արտադրական եւ տնտեսական գույք՝ 17 496,6 հազ. ռուբլի. գրադարանային ֆոնդ՝ 100,9 հազ. ռուբլի: 2017 թվականի ընթացքում ստացվել են 2 240,7 հազ. ռուբլի գումարի չափով հիմնական միջոցներ:

7-րդ նպատակ. Գնահատել Միության բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողության իրականացումը Միության մարմինների կողմից:

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 402 եւ 2016 թվականի օգոստոսի 29-ի թիվ 270 հրամաններով հաստատված՝ Բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողության ընդհանուր սկզբունքներին եւ Միության բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողության մասին հիմնադրույթին համապատասխան՝ ներքին վերահսկողությունն իրականացվում է Հանձնաժողովի կառուցվածքային

ստորաբաժանումների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների կողմից ինքնավերահսկողության, ըստ ենթակայության մակարդակի վերահսկողության եւ ըստ փոխգործակցության մակարդակի վերահսկողության մեթոդներով, ինչը հաստատվում է վերահսկողական գործողություններ իրականացնող անձանց կողմից փաստաթղթերը մակագրելով:

Ներքին վերահսկողության արդյունքները ներառվում են Ամփոփիչ հաշվետվության մեջ, որը քննարկվում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի մոտ խորհրդակցության ժամանակ: Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները տեղեկացվում են Ներքին վերահսկողության կազմակերպման եւ իրականացման մասին ամփոփիչ հաշվետվության մեջ պարունակվող եզրահանգումների ու առաջարկությունների վերաբերյալ՝ հայտնաբերված խախտումներն ու թերությունները հետագայում թույլ չտալու, Միության բյուջեի միջոցների կառավարման եւ տնօրինման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Դատարանի պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները ներքին վերահսկողություն են իրականացնում Դատարանի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 7-ա հրամանով հաստատված՝ Դատարանում բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողության մասին հիմնադրույթով սահմանված լիազորությունների սահմաններում:

Բյուջետային ընթացակարգերի կատարման ժամանակ հայտնաբերված թերությունները (խախտումները), դրանց առաջացման պատճառների մասին տեղեկատվությունը եւ դրանց վերացման միջոցները արտացոլվում են Ներքին վերահսկողության արդյունքների մասին հաշվետվության մեջ, որն ուսումնասիրվում է Դատարանի նախագահի կողմից:

2017 թվականին Միության մարմիններում ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումներ չեն անցկացվել:

8-րդ նպատակ. Վերլուծել արտաքին աուդիտի (վերահսկողության)

անցկացման ընթացքում հայտնաբերված խախտումների եւ թերությունների, դրանց պատճառների եւ հետեւանքների վերացման միջոցների կատարումը Միության մարմինների կողմից:

2017 թվականին Միության մարմիններում արտաքին աուդիտի (վերահսկողության) իրականացման արդյունքներով ամփոփիչ հաշվետվությունները (այսուհետ՝ Ամփոփիչ հաշվետվություններ) հաստատվել են պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների 2018 թվականի մարտի 28-ի համատեղ որոշմամբ:

Բարձրագույն խորհրդի «2017 թվականին Եվրասիական տնտեսական միության մարմիններում արտաքին աուդիտի (վերահսկողության) արդյունքների մասին» որոշման նախագիծը հավանության է արժանացել Հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի հուլիսի 13-ի թիվ 62 որոշմամբ եւ ներկայացվել է Բարձրագույն խորհրդի քննարկմանը:

Ամփոփիչ հաշվետվություններում պարունակվող առաջարկների եւ առաջարկությունների իրագործման նպատակով Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից 2018 թվականի հուլիսի 20-ին հաստատվել է Ամփոփիչ հաշվետվություններում պարունակվող առաջարկների եւ առաջարկությունների իրագործման միջոցառումների պլանը:

Միջոցների ծախսման արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ առաջարկությունների իրագործման շրջանակներում Հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են հետեւյալ միջոցները՝ մտցվել են տուժանքի վճարման պահանջի իրավունքի անվերապահ կիրառման մասին նորմեր. անդամ պետությունների ազգային հատվածներում օգտագործման համար փոխանցվել է 15 ընդհանուր գործընթացների «բազային իրագործումների» ծրագրային ապահովում. նախատեսվել են աշխատատարության հաշվարկի վերաբերյալ առաջարկություններ. ձեւավորվել է ծառայողական գործուղումների արդյունքներով հաշվետու փաստաթղթերի տրամադրման հաշվառման բազա. աշխատանքներ են տարվում արտասահմանյան օպերատորներից ավիատոմսեր ձեռք բերելու

դեպքերը կրճատելու ուղղությամբ. հանվել են ոչ աշխատանքային ժամերին պահպանվող, փակ, ջեռուցվող վճարովի ավտոկայանատեղիում Հանձնաժողովի ծառայողական ավտոմեքենաների գտնվելն ապահովելու պարտավորությունները:

Նախորդ աուդիտորական միջոցառման ընթացքում նշվել է, որ «ԿՌՈԿ ինկորպորեյտեդ» ՓԲԸ-ի հետ Հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ Դ15——08088 պայմանագրով պարտավորությունների կատարումը 176 օրով ուշացնելու փաստով հայցապահանջային աշխատանք չի կատարվել: Սույն աուդիտի պահին Հանձնաժողովի կողմից «ԿՌՈԿ ինկորպորեյտեդ» ՓԲԸ-ից տուժանքը չի գանձվել, հայցապահանջային աշխատանք չի կատարվել: Տվյալ հարցի մինչդատական կարգավորման համար տարվա ընթացքում կատարվել է միայն ներքին համաձայնեցում, եւ բանակցություններ են անցկացվել:

Դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի լիագումար նիստի «Դատարանի գործունեության ապահովման վերաբերյալ հարցերի քննարկման մասին» թիվ 2 որոշմամբ հաստատվել է Արտաքին աուդիտի (վերահսկողության) անցկացման ընթացքում հայտնաբերված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների պլանը:

Նշված Միջոցառումների պլանի իրագործման շրջանակներում Դատարանի կողմից հանվել են ֆիզկուլտուրային-առողջարարական ծառայությունների մասին դրույթները. հանվել է Հանձնաժողովի կոլեգիայի անդամների բժշկական սպասարկման մակարդակով դատավորների եւ նրանց ընտանիքների անդամների բժշկական սպասարկման իրականացում նախատեսող նորմը. ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնումներ իրականացնելիս բացառված են առանց գնման գինը նշելու տնտեսական պայմանագրեր կնքելու դեպքերը, ինչպես նաեւ գնի փոփոխման հնարավորությունը. Դատարանի բյուջետային ելեւմտացույցը կազմելու եւ վարելու պարտականությունները վերապահված են գլխավոր հաշվապահին:

Դատարանի կողմից որպես Միության բյուջեի եկամուտ փոխհատուցվել են ֆիզկուլտուրային-առողջարարական ծառայությունների համար անհիմն կերպով ծախսված 1 482,8 հազ. ռուբլի գումարի չափով միջոցներ:

8. Արտաքին աուդիտի (վերահսկողության) արդյունքները:

8.1. Անցկացված արտաքին աուդիտի արդյունքներով 2017 թվականի Միության բյուջեն կատարելիս ընդհանուր առմամբ դիտվում է Միության մարմինների կողմից նորմատիվ ակտերի պահանջների պահպանում: Ընդ որում, Միության բյուջեն կատարելիս թույլ են տրվում առանձին խախտումներ եւ համակարգային թերություններ:

8.2. Տարեկան կտրվածքով դիտվում է Միության բյուջեից հատկացված միջոցները Միության մարմինների կողմից չօգտագործվելու միտում (2016 թվականին՝ 1 134 929,4 հազ. ռուբլի (14,4 %), 2017 թվականին՝ 1 041 595,0 հազ. ռուբլի (13 %)), ինչը վկայում է ծախսերի ոչ բավականաչափ որակյալ պլանավորման մասին:

8.3. 2017 թվականի արդյունքներով Միության մարմինների դեբիտորական պարտքը կազմել է 607 006,5 հազ. ռուբլի եւ 2016 թվականի համեմատ ավելացել է 139 524,0 հազ. ռուբլով կամ 30 %-ով. կրեդիտորական պարտքը կազմել է 182 236,4 հազ. ռուբլի եւ 2016 թվականի համեմատ ավելացել է 32 131,8 հազ. ռուբլով կամ 21 %-ով:

8.4. Հանձնաժողովի կողմից ձեռք բերված հիմնական միջոցների քանակը եւ առանձին տեսակները չեն համապատասխանում Հանձնաժողովի բյուջետային նախահաշիվը ձեւավորելիս պլանավորված ծավալներին: Պլանավորելիս հաշվի չի առնվել նաեւ 2016 թվականի չօգտագործված մնացորդների հաշվին ֆինանսավորման ավելացումը:

8.5. Միության մարմիններին հիմնական միջոցներով ապահովելու նորմերը կանոնակարգող նորմատիվ եւ իրավական ակտերը բացակայում են:

8.6. Ինտեգրված տեղեկատվական համակարգի շրջանակներում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել սահմանված ժամկետներում 66 ընդհանուր գործընթացների (81%) իրագործումը, դրանցից 57 ընդհանուր գործընթացների մշակման համար ծախսվել է 72 913,0 հազ. ռուբլի:

8.7. Մինչեւ 2017 թվականի օգոստոս ամիսը Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծումն ու զարգացումն իրականացվել են առանց դրա զարգացման ռազմավարության:

8.8. Հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 6 կարգադրությամբ հաստատված՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման 2017-2018 թվականների միջոցառումների պլանով նախատեսված է աշխատանքների կատարում՝ առանց նշելու դրանց արժեքը:

8.9. Չեն անցկացվել Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մասին արձանագրության 18-րդ կետով նախատեսված միջոցառումները՝ Հանձնաժողովի կողմից մշակված՝ Վստահության անդրսահմանային տարածքի ստեղծմանը, զարգացմանը եւ գործունեությանը ներկայացվող պահանջներին էլեկտրոնային ձեւով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի բաղադրիչների համապատասխանության ստուգում: Անդամ պետությունների ներկայացուցիչներից ձեւավորման ենթակա հանձնաժողով չի ստեղծվել:

8.10. Հանձնաժողովի կողմից չեն մշակվել Ինտեգրված տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքով նախատեսված 2 ենթահամակարգեր (դատական գործավարության ենթահամակարգ եւ արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների նույնականացման ենթահամակարգ):

8.11. Հանձնաժողովի հրամանով 2017 թվականի համար հաստատված՝ ԳՀԱ-ների ֆինանսավորման ծավալը 28 859,7 հազ. ռուբլով պակաս է ԳՀԱ-ների

համար Հանձնաժողովի բյուջեով նախատեսված ծավալից, ինչը վկայում է գիտահետազոտական աշխատանքների համար միջոցների ոչ որակյալ պլանավորման մասին եւ տարվա արդյունքներով չօգտագործված մնացորդների գոյացման պատճառ է:

8.12. ԳՀԱ-ների արժեքի սահմանման ընթացակարգին բնորոշ է այն, որ դրա կատարման ժամկետների եւ անհրաժեշտ մասնագետների թվի սահմանման կարգը կարգավորված չէ:

8.13. Կատարողների կողմից ԳՀԱ-ների 16 պայմանագրերի մասով (35 %) թույլ է տրվել պարտավորությունների կատարման ժամկետների խախտում, որոնցից 1 պայմանագրի մասով տուժանք չի գանձվել, 1 պայմանագրի մասով տուգանային պատժամիջոցներ նախատեսված չեն:

8.14. Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթի պահանջների խախտմամբ Հանձնաժողովի եւ ԳՀԱ-ները ոչ ժամանակին՝ 30 օրացուցային օր ուշացմամբ կատարած Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի) միջեւ 2016 թվականի նոյեմբերի 14-ի պայմանագրով տուժանք նախատեսված չէ:

8.15. Արարողակարգի եւ կազմակերպական ապահովման դեպարտամենտին է վերապահված սահմանված պահանջներին պլանավորվող ԳՀԱ-ների համապատասխանության մասով դրանց բոլոր հայտերի քննարկումը, այդ թվում՝ այն ԳՀԱ-ների, որոնց պատվիրատուն տվյալ դեպարտամենտն է, ինչը ոչ բավարար վերահսկողության դեպքում կարող է շահերի բախման ռիսկերի հանգեցնել:

8.16. 21 ավտոմեքենաների կանգնած լինելու դեպքում Հանձնաժողովի կողմից վճարվել է 6 լրացուցիչ ավտոմեքենաների վարձավճար: Դատարանի կողմից չեն օգտագործվել 2017 թվականին ձեռք բերված 224,9 հազ. ռուբլի գումարի չափով 11 միավոր հիմնական միջոցներ (մոնիտորներ, համակարգային բլոկներ):

8.17. Հիմնական միջոցների 179 օբյեկտների դուրսգրման դեպքում Հանձնաժողովի կողմից չեն սահմանվել դրանց դուրսգրման կոնկրետ պատճառները (մաշվածություն, վթար, շահագործման ժամանակ խախտումներ):

8.18. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների (բացի ԳՀԱ-ներից եւ տեղեկատվական համակարգերից) գնումներն իրականացվում են առանց դրանց տարեկան պլանավորման, սահմանված չեն ծանուցագրի, տիպային պայմանագրի ձեւերը, հայտերի ուսումնասիրման ժամկետները, հնարավոր այն մատակարարների ընտրության չափանիշները, որոնք Հանձնաժողովի ստորաբաժանումների կողմից սահմանվում են սեփական հայեցողությամբ:

Այս ամենը բացասաբար է անդրադառնում ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնման ընթացակարգերի տեւողության, միջոցների ծախսման արդյունավետության վրա եւ հանգեցնում է գնումների մասնակիցներին անհիմն կերպով նախապատվություն տալու ռիսկերի առաջացման:

8.19. Նախորդ արտաքին աուդիտի արդյունքներով «ԿՌՈԿ ինկորպորեյտեդ» ՓԲԸ-ից տուժանքի գանձման մասով Հանձնաժողովի կողմից հայցապահանջային աշխատանքներ չեն կատարվել: Մեկ տարվա ընթացքում աշխատանքը հասցվել է միայն համաձայնեցման ներքին ընթացակարգերին եւ մատակարարի հետ բանակցություններ վարելուն:

8.20. Դատարանի մարմինների հաստիքացանկը 2016-2017 թվականներին ամբողջությամբ չի համալրվել (2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 71,8 %, 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 70,3 %):

8.21. Դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոններով նախատեսված լրացուցիչ վճարվող արձակուրդները, ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում վաստակի պահպանումը չեն համապատասխանում Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը եւ Սոցիալական երաշխիքների, արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին

հիմնադրույթի 43-րդ կետի պահանջներին:

8.22. Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների նյութական խթանման մասին հիմնադրույթով նյութական խրախուսումների հաշվարկման եւ վճարման ժամանակ հաշվի չեն առնվում ծառայողական գործունեության արդյունքները:

8.23. Դատարանի տարածքների շահագործման ծառայությունների համար «Գլխավոր տնտեսական վարչություն» ՊՀ-ի կողմից ներկայացվող հաշիվ-ապրանքագրերով սահմանված է սակագին, որի չափը հաշվարկներով հաստատված չէ:

8.24. Դատարանի գնումների պլանը ձեւավորվում է կամայական ձեւով՝ առանց նշելու ծառայությունների ծավալը: Դրա կատարման նկատմամբ դիտանցման բացակայության դեպքում սահմանված է ծառայությունների առանձին տեսակների մասով տարեկան պլանի չկատարում:

Գնումների ոչ արդյունավետ պլանավորումը, Գնումների պլանի կատարման դիտանցման բացակայությունը հանգեցնում են գնումների տնտեսական արդյունավետություն չապահովելու ռիսկերի՝ նվազագույն գներով գոհացուցիչ բնույթի անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) որոնման ու գնման առումով:

8.25. Գնումների մասին հիմնադրույթի 5-րդ կետի խախտմամբ Դատարանում բացակայում են Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների համար բնակելի տարածքների վարձակալության 24 կնքված պայմանագրերով գների նախնական ուսումնասիրման, դիտանցման արդյունքները, որոնց համաձայն 2017 թվականին փոխանցվել է 27 596, 9 հազ. ռուբլի:

9. Հայտնաբերված խախտումների եւ թերությունների, դրանց պատճառների եւ հետեւանքների վերացման վերաբերյալ առաջարկություններ, Միության բյուջեի միջոցների ձեւավորման, կառավարման եւ տնօրինման արդյունավետության բարձրացման, Միության գույքի եւ մյուս ակտիվների

օգտագործման, Միության իրավունքի մեջ մտնող ակտերի եւ Միության անդամ պետությունների օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ու առաջարկներ:

9.1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ միջոցներ ձեռնարկել հետեւյալ ուղղություններով՝

1) ինտեգրված տեղեկատվական համակարգի 66 ընդհանուր գործընթացների իրագործման ավարտի ապահովում եւ համապատասխան ընդհանուր գործընթացներին անդամ պետությունների լիազորված մարմինների միացում:

2) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի նոյեմբերի 7-ի «Վստահության անդրսահմանային տարածքի ստեղծմանը, զարգացմանը եւ գործունեությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 152 կարգադրությամբ նախատեսված պահանջներին էլեկտրոնային ձեւով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի բաղադրիչների համապատասխանության ստուգում.

3) փոփոխությունների եւ լրացումների կատարում՝

- Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման միջոցառումների պլանում՝ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման աշխատանքների կտրվածքով արժեքը, ինչպես նաեւ կատարված աշխատանքների ավարտի ձեւը նշելու մասով.
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2017 թվականի մայիսի 30-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովում գիտական հետազոտությունների հետ կապված գործունեության կազմակերպման մասին» թիվ 147 հրամանում, որոնցով նախատեսվում են ԳՀԱ-ների կատարման համար անհրաժեշտ

մասնագետների թիվը եւ ժամանակահատվածը սահմանելու նորմեր.

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2012 թվականի հունվարի 25-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվերների տեղադրման եւ պայմանագրերի կնքման մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 5 հրամանում, որոնցով ամրագրվում է գնումների պլանավորումը եւ գնումների պլանի ձեւավորումը, գնումների կատարման մասին ծանուցագրի եւ տիպային պայմանագրի ձեւը, մատակարարների համար չափանիշները, մատակարարների հայտերի ուսումնասիրման եւ գնահատման ժամկետները:

9.2. Եվրասիական տնտեսական դատարանին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հետեւյալ ուղղություններով՝

1) Դատարանի կողմից վարձակալվող վարչական շենքի կոմունալ եւ շահագործման ծախսերի փոխհատուցման վերլուծության անցկացում, որի արդյունքներով ապահովել 1 քառ. մ ԸՕՏ (ընդհանուր օգտագործման տարածքի) սակագնով շահագործման ծառայությունների վճարմանն ուղղվող ծախսերի հիմնավորումը.

2) փոփոխությունների եւ լրացումների կատարում՝

- Եվրասիական տնտեսական միության դատարանի նախագահի 2015 թվականի հունիսի 1-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվերների տեղադրման, գնումների կազմակերպման եւ պայմանագրերի կնքման մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 13 հրամանում, որոնցով սահմանվում են

գնումների պլանի ձեւը (նշելով գնումների տեսակը, արժեքը, քանակը) եւ գնումների տարեկան պլանի կատարման դիտանցման անցկացումը.

- Եվրասիական տնտեսական միության դատարանի նախագահի 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոնները հաստատելու մասին» թիվ 8 հրամանում՝ բացառությամբ լրացուցիչ վճարվող արձակուրդի տրամադրում, ինչպես նաեւ տեղակայող երկրի օրենսդրությանը վաստակը համապատասխանեցնելու նպատակով ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում դրա պահպանում նախատեսող նորմերի.
- Եվրասիական տնտեսական միության դատարանի նախագահի 2016 թվականի հունիսի 1-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 2-ա հրամանում, որով կանոնակարգվում են փաստաթղթաշրջանառության կանոններն ու գծապատկերը:

Հավելված

1. Միջոցառման նպատակներն ու հարցերը, 1 օրինակից՝ 3 թերթի վրա:

2. 2017 թվականի Եվրասիական տնտեսական միության մարմինների ծախսերի վերաբերյալ տեղեկություններ, 1 օրինակից՝ 1 թերթի վրա:

3. Այն օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի ցանկը, որոնց կատարումն ստուգվել է միջոցառման ընթացքում, 1 օրինակից՝ 3 թերթի վրա:

Հավելված թիվ 1

«2017 թվականին Եվրասիական տնտեսական միության բյուջեի

կատարման եւ Եվրասիական տնտեսական միության բյուջեի կատարման մասին բյուջետային հաշվետվության ստուգում (ֆինանսական աուդիտ՝ համապատասխանության աուդիտի եւ արդյունավետության աուդիտի հետ մեկտեղ)» միջոցառման նպատակներն ու հարցերը

Բյուջետային եւ այլ հաշվետվությունների հավաստիության, Միության բյուջեի միջոցների, Միության գույքի եւ մյուս ակտիվների օգտագործման հասցեականության, նպատակային բնույթի եւ արդյունավետության սահմանում:

4.1. 1-ին նպատակ. Ստուգել Միության բյուջեի կատարման մասին հաշվետվության պատրաստման կարգը, դրա կազմը, բովանդակությունը եւ ներկայացման ժամկետները:

4.1.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել Միության բյուջեի կատարման մասին հաշվետվության նախագծի կազմի ու բովանդակության, քննարկման համար այն լիազորված մարմիններ ներկայացնելու ժամկետների համապատասխանությունը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 78 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին հիմնադրույթի պահանջներին.

ստուգել եւ վերլուծել եկամուտների եւ ծախսերի մասով Միության բյուջեի կատարման փաստացի ցուցանիշների համապատասխանությունը Միության՝ հաշվետու ֆինանսական տարվա բյուջեի մասին որոշմամբ հաստատված ցուցանիշներին, եկամուտների ու ծախսերի ամբողջական արտացոլումն եւ հավասարակշռվածությունը:

4.2. 2-րդ նպատակ. Ստուգել Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեւմտացույց եւ միջոցները տնօրինողների (ստացողների) բյուջետային ելեւմտացույցներ կազմելու եւ վարելու կարգի պահպանումը:

4.2.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել ամփոփ բյուջետային ելեմտացույցի համապատասխանությունը Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից հաստատվող՝ Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեմտացույց եւ միջոցները տնօրինողների (ստացողների) բյուջետային ելեմտացույցներ կազմելու եւ վարելու կարգին.

ստուգել հաշվետու ֆինանսական տարում Միության բյուջեի կառավարչի կողմից Միության եւ Միության մարմինների բյուջեի հաշիվների միջեւ դրամական միջոցների փոխանցման կարգի պահպանումը.

ստուգել հաշվետու ֆինանսական տարում Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեմտացույցի մեջ փոփոխությունների կատարման ճշտությունը Միության բյուջեի ծախսերը Միության մարմնի բյուջետային նախահաշվի ծախսերի հոդվածների միջեւ վերաբաշխելու մասով՝ բացի աշխատավարձի ծախսերից՝ ծախսերի՝ այդ հոդվածներով հաստատված ընդհանուր ծավալի 10 տոկոսի սահմաններում.

ստուգել հաշվետու ֆինանսական տարում Միության բյուջեում փոփոխություններ կատարելու մասին Բարձրագույն խորհրդի որոշման առկայությունը՝ Միության բյուջեի ծախսերը Միության մարմնի բյուջետային նախահաշվի ծախսերի հոդվածներով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 10 տոկոսից ավելի չափով այդ հոդվածների, միջոցները տնօրինողների (ստացողների) միջեւ վերաբաշխելու դեպքում, ինչպես նաեւ աշխատավարձի ծախսերի հոդվածի կիրառմամբ:

4.3. 3-րդ նպատակ. Ստուգել Միության մարմինների բյուջետային նախահաշիվների կատարումը:

4.3.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել ծախսերի մասով բյուջետային նախահաշվի կատարման փաստացի ցուցանիշների համապատասխանությունը Միության մարմինների բյուջետային նախահաշիվներում եւ միջոցները տնօրինողների (ստացողների) բյուջետային

ելեւմտացույցներում հաստատված ցուցանիշներին, ինչպես նաեւ կատարված ծախսերի համապատասխանությունը բյուջետային դասակարգմանը.

ստուգել բյուջեի ծախսերի օրինականությունը, նպատակահարմարությունը, հիմնավորվածությունը, յուրաժամանակությունը, արդյունավետությունը եւ արդյունավորությունը ծախսերի բյուջետային դասակարգման հոդվածների եւ ենթահոդվածների կտրվածքով, այդ թվում՝

Միության մարմինների գործունեության ապահովման մասով.

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի եւ Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման ապահովման մասով.

ստուգել գնումների պլանի ձեւավորումն ու կատարումը, գնումների մասին տեղեկատվության տեղադրումը, 2017 թվականին կնքված եւ կատարված պայմանագրերով ու կոնտրակտներով գնումների օրինականությունը, հիմնավորվածությունը, նպատակահարմարությունը, իրագործելիությունը եւ արդյունավետությունը:

4.4. 4-րդ նպատակ. Ստուգել բյուջետային հաշվառման եւ բյուջետային հաշվետվությունների հավաստիությունը:

4.4.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից հաստատվող՝ բյուջետային հաշվառման ընդհանուր սկզբունքների սահմանումն ու պահպանումը.

ստուգել հաշվետու ֆինանսական տարվա համար հաշվառման հաստատված քաղաքականության առկայությունը.

ստուգել անալիտիկ հաշվառման տվյալների համապատասխանությունը սինթետիկ հաշվառման հաշիվների շրջանառություններին եւ մնացորդներին.

ստուգել տնտեսական գործառնությունները եւ գույքագրման արդյունքները բյուջետային հաշվառման հաշիվների վրա գրանցելու յուրաժամանակությունը.

վերլուծել դեբիտորական եւ կրեդիտորական պարտքի վիճակը՝ ըստ Միության միջոցների.

ստուգել Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից հաստատվող՝ միջոցները տնօրինողների (ստացողների) բյուջետային հաշվետվությունների ներկայացման կարգի պահպանումը.

ստուգել միջոցները տնօրինողների (ստացողների) բյուջետային հաշվետվությունների համապատասխանությունը բյուջետային հաշվառման տվյալներին.

4.5. 5-րդ նպատակ. Ստուգել Միության բյուջեի միջոցների հասցեականությունն ու նպատակային նշանակությունը:

4.5.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել բյուջետային միջոցները կոնկրետ ստացողներին հասցնելը՝ նշելով դրանց օգտագործման նպատակները.

4.6. 6-րդ նպատակ. Գնահատել Միության բյուջեի միջոցների, Միության գույքի եւ մյուս ակտիվների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ֆինանսական ներդրումների) օգտագործման արդյունավետությունը հաշվետու ֆինանսական տարում:

4.6.1. Միջոցառման հարցերը՝

տալ արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտի հաշվեկշռում առկա գույքի համառոտ բնութագիրը, այդ թվում՝ անշարժ եւ շարժական գույքի կազմի եւ կառուցվածքի, հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ֆինանսական ներդրումների կազմի եւ կառուցվածքի վերլուծությունը.

ստուգել շարժական եւ անշարժ գույքի օբյեկտների նկատմամբ իրային իրավունքների գրանցումը հաստատող փաստաթղթերի առկայությունը.

ստուգել ֆինանսական ներդրումներ կատարելու իրավունքի եւ այդ իրավունքից բխող՝ դրամական միջոցներ եւ այլ ակտիվներ ստանալու իրավունքի

առկայությունը, ֆինանսական ներդրումների հետ կապված ֆինանսական ռիսկերի (գնի փոփոխման ռիսկ, իրացվելիության ռիսկ եւ այլն)՝ կազմակերպությանն անցնելը, ապագայում տնտեսական շահույթ (եկամուտ) բերելու կարողությունը.

ստուգել եւ վերլուծել արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտի տիրապետման, տնօրինման եւ օգտագործման տակ գտնվող շարժական եւ անշարժ գույքի հաշվառման վիճակը, հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ֆինանսական ներդրումների հաշվառման վիճակը.

ստուգել հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ֆինանսական ներդրումների շարժի մասով գործառնությունների ձեւակերպման եւ հաշվառման մեջ արտացոլման կարգը.

ստուգել գույքագրման անցկացման կարգը (նախքան տարեկան հաշվետվություն կազմելը՝ նյութական պատասխանատու անձանց փոփոխման, գույքի հափշտակման, չարաշահման կամ փչացման փաստերի հայտնաբերման, արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտի վերակազմակերպման կամ լուծարման եւ այլ դեպքերում), հաշվառման մեջ դրա ամբողջական եւ ճիշտ արտացոլումը:

4.6.2. Արդյունավետության գնահատման չափանիշները՝

միջոցներն օգտագործելիս պլանավորված արդյունքներին հասնելը.

Միության գույքի եւ մյուս ակտիվների պահպանվածությունը եւ հաշվառման հավաստիությունն ապահովելը:

4.7. 7-րդ նպատակ. Գնահատել Միության բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողության իրականացումը Միության մարմինների կողմից:

4.7.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել եւ վերլուծել Միության մարմինների՝ ներքին ֆինանսական վերահսկողության կարգի մասին նորմատիվ ակտի առկայությունն ու բնութագիրը.

ստուգել եւ վերլուծել վերահսկողության պարբերականության, ներքին

վերահսկողության օբյեկտների կողմից կիրառվող մեթոդների եւ եղանակների պահպանումը.

վերլուծել Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների եւ թերությունների վերացման ուղղությամբ Միության մարմինների կողմից ձեռնարկված միջոցները:

4.7.2. Արդյունավետության գնահատման չափանիշները՝

Արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտներում ներքին վերահսկողության համակարգի առկայություն, հուսալիություն եւ գործունեության արդյունավորություն:

4.8. 8-րդ նպատակ. Վերլուծել արտաքին աուդիտի (վերահսկողության) անցկացման ընթացքում հայտնաբերված խախտումների եւ թերությունների, դրանց պատճառների եւ հետեւանքների վերացման միջոցների կատարումը Միության մարմինների կողմից:

4.8.1. Միջոցառման հարցերը՝

տեսուչների խմբի կողմից Միության մարմիններ ուղարկված փաստաթղթերի քննարկման արդյունքներով նրանց կողմից ձեռնարկված միջոցների մասին ստացված տեղեկատվության ուսումնասիրում.

միջոցառումների արդյունքներով տեսուչների խմբի կողմից ուղարկված փաստաթղթերում պարունակվող պահանջների, առաջարկների եւ առաջարկությունների կատարման ամբողջականության, յուրաժամանակության եւ արդյունավորության գնահատում:

Հավելված թիվ 2

2017 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ծախսերի վերաբերյալ տեղեկություններ:

հազ. ռուբլի

Ծախսերի անվանումը	Բյուջետային դասակարգման ծածկագիրը	Հաստատված ծախսերը (փոփոխությունները հաշվի առնելով)	Կատարվել է	Չկատարված գումարների մնացորդները	%
1	2	4	5	6	7
Եվրասիական տնտեսական հանձնաժողով	10 10 10	7 663 666,7	6 664 926,3	998 740,4	87,0
Անձնակազմին վճարելու համար հատկացված ծախսեր	*10 10 10 10*	*3 096 986,7*	*2 924 249,1*	*172 737,6*	*94,4*
Աշխատավարձի ծախսեր	10 10 10 11	*2* 232 474.9	2 169 425,0	63 049,9	97,2
Անձնակազմին այլ վճարումների եւ աշխատանքի վարձատրության վճարումների հավելագրման համար հատկացված ծախսեր	10 10 10 12	864 511,8	754 824,1	109 687,7	87,3
Միության մարմինների կարիքների համար ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում	*10 10 10 20*	*4 535 252,0*	*3 720 291,3*	*814 960,7*	*82,0*
Գիտահետազոտական աշխատանքներ	10 10 10 21	310 908,3	256 079,9	54 828,3	82,4
Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման նպատակով ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում	10 10 10 22	914 912,4	456 628 2	458 284,2	49,9
Հիմնական միջոցների գնում	10 10 10 23	92 327,9	89 641,0	2 686,9	97,1

Ծախսերի անվանումը	Բյուջետային դասակարգման ծածկագիրը	Հաստատված ծախսերը (փոփոխությունները հաշվի առնելով)	Կատարվել է	Չկատարված գումարների մնացորդները	%
Այլ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում	10 10 10 24	3 217 103,5	2 917 942,2	299 161,3	90,7
Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման ապահովում	10 10 20	31 428,0	20 385,9	11 042,1	64,9

2017 թվականին Եվրասիական տնտեսական միության դատարանի ծախսերի վերաբերյալ տեղեկություններ:

հազ. ռուբլի

Ծախսերի անվանումը	Բյուջետային դասակարգման ծածկագիրը	Հաստատված ծախսերը (փոփոխությունները հաշվի առնելով)	Կատարվել է	Չկատարված գումարների մնացորդները	%
Եվրասիական տնտեսական միության դատարան	**20 20 10**	**347 536,6**	**304 682,0**	**42 854,6**	87,7
Անձնակազմին վճարումների եւ աշխատանքի վարձատրության վճարումների հավելագրման համար հատկացված ծախսեր	*20 20 10 10*	*180 436,7*	*170 320,9*	*10 115,8*	*94,4*
Աշխատավարձի ծախսեր	20 20 10 11	126 366,1	126 366,1	0,0	100
Անձնակազմին այլ վճարումների եւ աշխատանքի վարձատրության վճարումների հավելագրման համար հատկացված ծախսեր	20 20 10 12	54 070,6	43 954,8	10 115,8	81.3
Միության մարմինների կարիքների համար ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում	*20 20 10 20*	*167 099,9*	*134 361,2*	*32 738,7*	*80,4*
Հիմնական միջոցների գնում	20 20 10 23	4 056,2	2 691,8	1 364,4	66,4
Այլ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում	20 20 10 24	163 043,8	131 669,4	31 374,4	80,8

Հավելված թիվ 3

Օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի ցանկ,

որոնց կատարումն ստուգվել է միջոցառման ընթացքում

Համարը՝ ը/կ	Օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի անվանումը, որոնց կատարումն ստուգվել է միջոցառման ընթացքում
1	«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին հիմնադրույթ» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված
2	«Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնադրություն» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 2 հավելված
	Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի
3	2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին հիմնադրույթի վերաբերյալ» թիվ 78 որոշում
4	2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից Եվրասիական տնտեսական միության բյուջե կատարվող բաժնեմասային ներդրումների չափերի (սանդղակի) մասին» թիվ 79 որոշում
5	2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի հաստիքների ընդհանուր թվաքանակը եւ կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 81 որոշում
6	2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների աշխատանքի վարձատրության կարգի մասին» թիվ 82 որոշում
7	2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի քարտուղարությունում թափուր պաշտոններ զբաղեցնելու համար թեկնածուների ընտրության մասին» թիվ 83 որոշում
8	2014 թվականի նոյեմբերի 21-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների, ինչպես նաեւ նրանց ընտանիքների անդամների բժշկական եւ տրանսպորտային սպասարկման կարգի մասին» թիվ 92 որոշում
9	2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Եվրասիական տնտեսական միության 2017 թվականի բյուջեի մասին» թիվ 13 որոշում
10	2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Եվրասիական տնտեսական միության դատարան դիմելիս տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող տուրքի չափը հաստատելու մասին» թիվ 28 որոշում
	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի

Համարը՝ ը/կ	Օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի անվանումը, որոնց կատարումն ստուգվել է միջոցառման ընթացքում
11	2012 թվականի հունիսի 15-ի «Խրախուսման ֆոնդի միջոցների հաշվին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների եւ դեպարտամենտների աշխատակիցների դրամական խրախուսման կարգի մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 31 որոշում
12	2015 թվականի հուլիսի 15-ի «Եվրասիական տնտեսական միության բյուջետային դասակարգման կազմի եւ կառուցվածքի մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 42 որոշում
13	2016 թվականի փետրվարի 12-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների ցանկի, հաստիքների թվաքանակի հաստատման եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջեւ դրանց բաշխման մասին» թիվ 1 որոշում
	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի
14	2017 թվականի հունվարի 13-ի «Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման 2017-2018 թվականների միջոցառումների պլանի մասին» թիվ 6 կարգադրություն
	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի
15	2012 թվականի հունվարի 25-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվերների տեղադրման եւ պայմանագրերի կնքման մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 5 հրաման
16	2012 թվականի մարտի 21-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամներին եւ դեպարտամենտների աշխատակիցներին ծառայողական բնակելի տարածքներով ապահովելու կարգի մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 81 հրաման
17	2012 թվականի հունիսի 27-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների մուտքերի ու ելքերի եւ նյութական պաշարների դուրսգրման հարցերով հանձնաժողովի ձեւավորման մասին» թիվ 180 հրաման
18	2013 թվականի մարտի 7-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամներին եւ աշխատակիցներին բջջային կապով ապահովելու կարգի մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 63 հրաման
19	2013 թվականի հունիսի 21-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գործուղման մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 184

Համարը՝ ը/կ	Օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի անվանումը, որոնց կատարումն ստուգվել է միջոցառման ընթացքում
	հրաման
20	2014 թվականի դեկտեմբերի 11-ի «Ծառայողական ավտոտրանսպորտի օգտագործման կարգը եւ աշխատանքի ռեժիմը հաստատելու մասին» թիվ 419 հրաման
21	2014 թվականի դեկտեմբերի 30-ի «Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեմտացույցի եւ միջոցները տնօրինողների (ստացողների) կողմից բյուջետային ելեմտացույցի կազմման եւ վարման կարգը հաստատելու մասին» թիվ 474 հրաման
22	2015 թվականի սեպտեմբերի 30-ի «Եվրասիական տնտեսական միության մարմիններում բյուջետային հաշվառման ընդհանուր սկզբունքները հաստատելու մասին» թիվ 323 հրաման
23	2015 թվականի դեկտեմբերի 8-ի «Տարեկան եւ եռամսյակային բյուջետային հաշվետվություն կազմելու եւ ներկայացնելու կարգի մասին հրահանգը հաստատելու վերաբերյալ» թիվ 384 հրաման
24	2015 թվականի դեկտեմբերի 15-ի «Եվրասիական տնտեսական միության բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողության ընդհանուր սկզբունքները հաստատելու մասին» թիվ 402 հրաման
25	2015 թվականի դեկտեմբերի 21-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 412 հրաման
26	2016 թվականի օգոստոսի 26-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովում Եվրասիական տնտեսական միության բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողության մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 270 հրաման
27	2017 թվականի մայիսի 30-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովում գիտական հետազոտությունների հետ կապված գործունեության կազմակերպման մասին» թիվ 147 հրաման
28	2017 թվականի հունիսի 20-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գիտահետազոտական աշխատանքների 2017-2018 թվականների ֆինանսավորման ծավալների բաշխման մասին» թիվ 164 հրաման
29	2017 թվականի դեկտեմբերի 25-ի «Եվրասիական տնտեսական միության բյուջեի կատարման մասին հաշվետվության կազմի վերաբերյալ» թիվ 453 հրաման
	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի

Համարը՝ ը/կ	Օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի անվանումը, որոնց կատարումն ստուգվել է միջոցառման ընթացքում
30	2017 թվականի մայիսի 16-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գիտահետազոտական աշխատանքների 2017-2018 թվականների պլանի մասին» թիվ 48 կարգադրություն
31	Եվրասիական տնտեսական միության 2017 թվականի բյուջեի կատարման մասին հաշվետվություն
32	2017 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բյուջետային հաշվետվություն
	Եվրասիական տնտեսական միության դատարանի
33	2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոնները հաստատելու մասին» թիվ 8 հրաման
34	2015 թվականի մարտի 5-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների նյութական խթանման մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 5 հրաման
35	2015 թվականի մարտի 9-ի «Ծառայողական ավտոտրանսպորտի օգտագործման կարգը եւ աշխատանքի ռեժիմը հաստատելու մասին» թիվ 6 հրաման
36	2015 թվականի մայիսի 25-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավորներին, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին բջջային կապով եւ շարժական հեռահաղորդակցության ծառայություններով ապահովելու կարգի մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 12 հրաման
37	2015 թվականի հունիսի 1-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվերների տեղադրման, գնումների կազմակերպման եւ պայմանագրերի կնքման մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 13 հրաման
38	2016 թվականի հունիսի 1-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 2-ա հրաման
39	2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանում բյուջեի կատարման նկատմամբ ներքին վերահսկողության մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 7-ա հրաման
40	2017 թվականին Եվրասիական տնտեսական միության դատարանի բյուջետային հաշվետվություն

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության մարմիններում
«Եվրասիական տնտեսական միության 2018 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացիկ աուդիտ (վերահսկողություն)»
արտաքին աուդիտի (վերահսկողության) իրականացման արդյունքներով

(հաստատված է պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների համատեղ որոշմամբ (« » ի 20 թվականի որոշում))

1. **Միջոցառումն անցկացնելու հիմքը՝** Եվրասիական տնտեսական միության մարմիններում 2018 թվականին արտաքին աուդիտ (վերահսկողություն) իրականացնելու պլանի 2-րդ կետ:

2. **Արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտները՝** Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան), Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. Միջոցառման առարկան՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) բյուջեի կատարման գործընթացն ընթացիկ ֆինանսական տարում. արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտների գործունեությունը Միության բյուջեի կատարման ընթացքում:

4. Միջոցառման նպատակները՝ վերլուծել 2018 թվականի առաջին կիսամյակում Միության բյուջեի կատարման ընթացքը Միության մարմիններին բյուջետային միջոցներ հատկացնելիս, ինչպես նաեւ եկամուտներ ստանալու գործընթացում՝ Միության մարմինների կողմից բյուջետային միջոցների անարդյունավետ եւ ոչ նպատակային ծախսումը կանխելու նպատակով (Հավելված թիվ 1):

5. Անցկացման ժամկետները՝ 2018 թվականի սեպտեմբերի 3-ից 11-ը՝ Դատարանում, 2018 թվականի սեպտեմբերի 12-ից հոկտեմբերի 5-ը՝ Հանձնաժողովում:

6. Գործունեության ժամանակահատվածը, որի ընթացքում անցկացվել է միջոցառումը՝ **2018 թվականի 1-ին կիսամյակ:**

7. Միջոցառման ընթացքում պարզվել է հետեւյալը:

Նպատակ 1. Ստուգել 2018 թվականի առաջին կիսամյակում Միության բյուջեի կատարման կարգի պահպանումը:

2018 թվականի 1-ին կիսամյակում Միության բյուջեն տնօրինողների բյուջետային հաշվետվության ձեւավորումը կատարվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ) 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 78 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական

տնտեսական միության բյուջեի մասին հիմնադրույթին (այսուհետ՝ Բյուջեի մասին հիմնադրույթ), Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 384 հրամանով հաստատված՝ Բյուջետային տարեկան եւ եռամսյակային հաշվետվություն կազմելու եւ ներկայացնելու կարգի մասին հրահանգին (այսուհետ՝ Բյուջետային հաշվետվություն կազմելու եւ ներկայացնելու կարգի մասին հրահանգ) համապատասխան:

2018 թվականի 1-ին կիսամյակում միջոցներ ստացողների բյուջետային հաշվետվությունը կազմվել եւ ներկայացվել է սահմանված ժամկետում:

Աուդիտի ընթացքում 2018 թվականի 1-ին կիսամյակում բյուջետային հաշվետվության պատրաստման կարգի, դրա կազմի եւ բովանդակության խախտումներ չեն հայտնաբերվել:

Բարձրագույն խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի «2018 թվականի Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» թիվ 15 որոշմամբ (այսուհետ՝ Թիվ 15 որոշում) 2018 թվականի բյուջեն եկամուտների եւ ծախսերի մասով հաստատվել է 8 101 468,1 հազ. ռուբլի գումարի չափով (Հանձնաժողովին՝ 7 738 949,2 հազ. ռուբլի, Դատարանին՝ 362 518,9 հազ. ռուբլի): Այսինքն՝ եկամուտների եւ ծախսերի մասով բյուջեն հավասարակշռվել է, ինչը համապատասխանում է Բյուջեի մասին հիմնադրույթի 3-րդ կետին:

Նույնանման ծավալներով հաստատվել է 2018 թվականին Միության բյուջեի եկամուտների եւ ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցը:

Նպատակ 2. Ստուգել 2018 թվականի առաջին կիսամյակում Միության անդամ պետությունների կողմից ներդրումների փոխանցման եւ փոխանցված ներդրումների հաշվառման ճշտության, ներդրումների մասով պարտքի մարման ճշտության ամբողջականությունը:

Բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ Եվրասիական տնտեսական միության բյուջե կատարվող բաժնեմասային ներդրումների չափերի (սանդղակի)

մասին» թիվ 79 որոշմանը համապատասխան՝ 2018 թվականի բաժնեմասային ներդրումների մասհանումների տոկոսները սահմանվել են հետեւյալ չափերով՝ Հայաստանի Հանրապետություն՝ 1,11 %, Բելառուսի Հանրապետություն՝ 4,56 %, Ղազախստանի Հանրապետություն՝ 7,11 %, Ղրղզստանի Հանրապետություն՝ 1,9 %, Ռուսաստանի Դաշնություն՝ 85,32 %: Բաժնեմասային ներդրումների սանդղակը սահմանվել է Միության յուրաքանչյուր անդամ պետության համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվներին համապատասխան:

Միության անդամ պետությունների բաժնեմասային ներդրումները սահմանվել են 8 101 468,1 հազ. ռուբլի գումարի չափով:

2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ բաժնեմասային ներդրումները Միության 2018 թվականի բյուջե փոխանցելու մասով Միության անդամ պետությունների պարտավորությունները (հաշվանցումը հաշվի առնելով) կատարվել են 4 532 953,5 հազ. ռուբլի գումարի չափով կամ 55,9 %-ով:

Բյուջեի մասին հիմնադրույթի 29-րդ, 30-րդ կետերի հիման վրա՝ ներդրումների վճարման մասով անդամ պետությունների պարտքի մարման կարգը սահմանվում է Բարձրագույն խորհրդի կողմից: Ընթացիկ ֆինանսական տարում չփոխանցված ներդրումները համարվում են համապատասխան ֆինանսական տարվա համար անդամ պետության պարտք եւ ենթակա են պարտադիր մարման հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում:

Բաժնեմասային ներդրումների փոխանցման մասով Բելառուսի Հանրապետության 2017 թվականի պարտքը 169 069,9 հազ. ռուբլի գումարի չափով մարվել է 2018 թվականի հունվարի 30-ին:

«Եվրասիական տնտեսական միության 2017 թվականի բյուջեի օգտագործման վերաբերյալ հաշվետվության մասին» Հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծով սահմանվել է, որ 169 069,9 հազ. ռուբլի գումարի չափով դրամական միջոցները 2018 թվականին ենթակա են հաշվանցման Միության բյուջե՝ անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների գումարներին

համամասն, այդ թվում՝ Բելառուսի Հանրապետությանը՝ 7 709,6 հազ. ռուբլի, Ղրղզստանի Հանրապետությանը՝ 3 212,3 հազ. ռուբլի, Հայաստանի Հանրապետությանը՝ 1 876,7 հազ. ռուբլի, Ղազախստանի Հանրապետությանը՝ 12 020,9 հազ. ռուբլի, Ռուսաստանի Դաշնությանը՝ 144 250,4 հազ. ռուբլի:

Նպատակ 3. Ստուգել Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեւմտացույցը եւ միջոցները տնօրինողների (ստացողների) կողմից բյուջետային ելեւմտացույցը հաստատելու եւ վարելու համապատասխանությունը Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 474 հրամանով հաստատված՝ Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեւմտացույցը եւ միջոցները տնօրինողների (ստացողների) կողմից բյուջետային ելեւմտացույցը կազմելու եւ վարելու կարգին:

Միության 2018 թվականի բյուջեի եկամուտների եւ ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցը 2017 թվականի նոյեմբերի 23-ին Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից հաստատվել է 8 101 468,1 հազ. ռուբլի գումարի չափով, այդ թվում՝ Հանձնաժողովի մասով՝ 7 738 949,2 հազ. ռուբլի, Դատարանի մասով՝ 362 518,9 հազ. ռուբլի:

2018 թվականի 1-ին կիսամյակում եկամուտների մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցում փոփոխություններ չեն կատարվել:

Ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցն ավելացել է 665 562,4 հազ. ռուբլով, այդ թվում՝

1) 02 ծածկագրով «Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա կատարվող փոփոխություններ»՝ 471 405,2 հազ. ռուբլով, որից 416 576,9 հազ. ռուբլին՝ ինտեգրացված տեղեկատվական համակարգի ստեղծմանը, գործունեության ապահովմանը եւ զարգացմանը. 54 828,3 հազ. ռուբլին՝ գիտահետազոտական աշխատանքներին (այսուհետ՝ ԳՀԱ).

2) 04 ծածկագրով «Բյուջեի մասին հիմնադրույթի 35-րդ կետի հիման վրա

կատարվող փոփոխություններ»՝ 2017 թվականի միջոցների մնացորդների՝ 194 157,2 հազ. ռուբլի գումարի չափով, որից 181 125,3 հազ. ռուբլին՝ կրեդիտորական պարտքի մարմանը (Հանձնաժողովի մասով՝ 169 761,0 հազ. ռուբլի, Դատարանի մասով՝ 11 364,3 հազ. ռուբլի). 4 051,2 հազ. ռուբլի՝ հիմնական միջոցների ձեռքբերմանը (Հանձնաժողովի մասով՝ 2 686,9 հազ. ռուբլի, Դատարանի մասով՝ 1 364,3 հազ. ռուբլի). 8 980,7 հազ. ռուբլի՝ Հանձնաժողովի մասով՝ Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի եւ Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացմանը:

Ծախսերի մասով Միության ամփոփ բյուջետային ելեւմտացույցում փոփոխությունների կատարում Միության մարմինների բյուջետային ելեւմտացույցի ծախսերի հոդվածների միջեւ այդ հոդվածներով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 10%-ից ավելի չափով 2018 թվականի 1-ին կիսամյակում միջոցները տնօրինողների (ստացողների) միջեւ չի իրականացվել:

Նպատակ 4. Վերլուծել 2018 թվականի առաջին կիսամյակում Միության բյուջեի միջոցների օգտագործման ճշտությունը՝ բյուջետային միջոցների անարդյունավետ եւ ոչ նպատակային ծախսումը կանխելու նպատակով:

2018 թվականի 1-ին կիսամյակում Ելեւմտացույց կազմելու եւ վարելու կարգի 12-րդ կետին համապատասխան ձեւակերպվող՝ դրամական միջոցների բաշխման հիման վրա Հանձնաժողովի՝ որպես Միության բյուջեի կառավարչի կողմից կատարվել է Միության մարմինների ծախսերի ֆինանսավորում՝ 4 532 953,5 հազ. ռուբլի գումարի չափով, այդ թվում՝ Հանձնաժողովին՝ 4 330 330,5 հազ. ռուբլի, Դատարանին՝ 202 623,0 հազ. ռուբլի:

2018 թվականին Հանձնաժողովի գործունեության ապահովման համար նախատեսվել է 8 391 782,9 հազ. ռուբլի գումարի չափով ֆինանսավորում, 2018 թվականի 1-ին կիսամյակում դրամարկղային ծախսերը կազմել են 2 670 613,1 հազ. ռուբլի (31,8 %):

Միջին տոկոսից ավելի դրամարկղային ծախսեր են գրանցվել «Անձնակազմին

այլ վճարումների եւ աշխատանքի վարձատրության վճարումների հաշվեգրման համար հատկացված ծախսեր» (45,3 %), «Գույքի պահպանման հետ կապված աշխատանքներ, ծառայություններ» (44,3 %), «Կապի ծառայություններ» (38,4 %), «Նյութական պաշարների արժեքի ավելացում» (37,9 %), «Աշխատավարձի ծախսեր» (37,5 %) եւ «Տրանսպորտային ծառայություններ» (37,5 %) հոդվածներով (ենթահոդվածներով):

Միջին տոկոսից ցածր դրամարկղային ծախսեր են նկատվում «Գիտահետազոտական աշխատանքներ» (7,4 %), «Այլ ծախսեր» (11,5 %), «Հիմնական միջոցների արժեքի ավելացում» (12,7 %), «Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացումն ապահովելու համար» (20,8 %), «Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում՝ Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման նպատակով» (22,9 %), «Վարձակալության վճար գույքից օգտվելու դիմաց» (25,1 %) եւ «Այլ աշխատանքներ, ծառայություններ» (27,3 %) հոդվածներով (ենթահոդվածներով):

Ծախսերի առանձին հոդվածների վերլուծությունը ցույց է տվել հետեւյալը:

<u>«Անձնակազմին վճարելու համար հատկացված ծախսեր՝ Միության մարմինների կողմից իրենց գործառույթների կատարումն ապահովելու նպատակներով»</u> հոդվածով 2018 թվականին նախատեսվել են 3 295 284,2 հազ. ռուբլի գումարի չափով միջոցներ, 2018 թվականի 1-ին կիսամյակում դրամարկղային ծախսերը կազմել են 1 311 947,6 հազ. ռուբլի (40 %), մնացորդը՝ 1 983 336,6 հազ. ռուբլի (60 %):

Հանձնաժողովի՝ 1 071 մարդ սահմանված թվով հաստիքացանկն ամբողջությամբ չի համալրվել՝ 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ 971 միավ. փաստացի թվաքանակով (90%):

Հանձնաժողովում աշխատանքի վարձատրությունն իրականացվում է Բարձրագույն խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 6 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների եւ դեպարտամենտների աշխատակիցների աշխատանքի վարձատրության կարգի (այսուհետ՝ Աշխատանքի վարձատրության կարգ) հիման վրա:

Կենսաթոշակային ապահովման մասով պարտադիր հատկացումները փոխանցվել են այն պետություններին, որոնց քաղաքացի են Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները:

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ֆոնդին Հանձնաժողովի կրեդիտորական պարտքը 2018 թվականի հունվարի 1-ին կազմել է 26 245,4 հազ. ռուբլի եւ մարվել է 2018 թվականի 1-ին կիսամյակում (ավարտվել է Հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի աշխատակիցների օգտին կենսաթոշակային վճարների վճարման կարգի մասով Հայաստանի Հանրապետության իրավական նորմերի ձեւավորման գործընթացը):

«Գիտահետազոտական աշխատանքներ» հոդվածով 2018 թվականին նախատեսվել է 354 828,3 հազ. ռուբլի, 2018 թվականի 1-ին կիսամյակում դրամարկղային ծախսերը կազմել են 26 426,8 հազ. ռուբլի (7,4 %), մնացորդը՝ 328 401,5 հազ. ռուբլի (92,6 %):

Հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2018 - 2019 թվականների գիտահետազոտական աշխատանքների պլանի մասին» թիվ 200 կարգադրության համաձայն (փոփոխություններով)՝ 2018 թվականին նախատեսվել է կատարել 43 ԳՀԱ՝ դրանցից 10 աշխատանք 2017 թվականից փոխանցված, 33 աշխատանք՝ նոր:

Կոլեգիայի նախագահի 2018 թվականի մարտի 6-ի «2017-2018 թվականներին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծավալների բաշխման մասին» թիվ 54 հրամանով (այսուհետ՝ Թիվ 54 հրաման) 2018-2019 թվականներին նախատեսվել է 41 ԳՀԱ-ների ֆինանսավորում 334 092,8 հազ. ռուբլի գումարի չափով, այդ թվում՝

2018 թվականին՝ 272 741,4 հազ. ռուբլի, 2019 թվականին՝ 61 351,4 հազ. ռուբլի:

2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ սահմանված չէ ֆինանսավորում 2 ԳՀԱ-ների մասով:

Այսպիսով, ԳՀԱ-ների՝ Թիվ 54 հրամանով նախատեսված ֆինանսավորման ծավալը (272 741,4 հազ. ռուբլի) ԳՀԱ-ների համար Հանձնաժողովի բյուջեով նախատեսվածից (354 828,3 հազ. ռուբլի) պակաս է 82 086,9 հազ. ռուբլի գումարի չափով: Դրանով իսկ Հանձնաժողովի գործունեությունն ուղղված չէ ԳՀԱ-ների համար հատկացվող միջոցների արդյունավետ պլանավորմանը, ինչը տարվա կտրվածքով չօգտագործված մնացորդների առաջացման պատճառ է:

2018 թվականի 1-ին կիսամյակում ԳՀԱ-ների կատարման համար կնքվել է 98 312,2 հազ. ռուբլի գումարի չափով 12 պայմանագիր, ինչպես նաեւ կատարվում է 2017 թվականից փոխանցված 10 պայմանագիր՝ 67 227,4 հազ. ռուբլի գումարի չափով:

«Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում՝ Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման նպատակով» հոդվածով 2018 թվականին նախատեսվել է 1 355 984,2 հազ. ռուբլի, 2018 թվականի 1-ին կիսամյակում դրամարկղային ծախսերը կազմել են 310 716,2 հազ. ռուբլի (22,9 %), մնացորդը՝ 1 045 267,9 հազ. ռուբլի (77,1 %):

Ինտեգրացված տեղեկատվական համակարգի համար հատկացված միջոցների ծախսումն իրականացվում է Հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 6 կարգադրությամբ հաստատված՝ դրա ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման 2017-2018 թվականների միջոցառումների պլանին համապատասխան:

2018 թվականի 6 ամսում կնքվել է 940 163,5 հազ. ռուբլի գումարի չափով 11 պայմանագիր, կատարվել եւ վճարվել է 310 716,2 հազ. ռուբլի:

«Այլ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում» հոդվածով

2018 թվականին նախատեսվել է 3 303 906,0 հազ. ռուբլի, 2018 թվականի 1-ին կիսամյակում դրամարկղային ծախսերը կազմել են 1 008 396,1 հազ. ռուբլի (30,5 %), մնացորդը՝ 2 295 509,9 հազ. ռուբլի (69,5 %): Տվյալ հոդվածի շրջանակներում կատարվել է տրանսպորտային եւ կոմունալ ծառայությունների, վարձակալության, կապի ծառայությունների, այլ աշխատանքների եւ ծառայությունների վճարում:

2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվեկշռում եղել է 107 միավոր ավտոտրանսպորտային միջոց, կես տարվա ընթացքում չի շահագործվել դրանցից 15 ավտոմոբիլ:

Կոմունալ ծառայությունների ծախսերը կազմել են 1 553,7 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 40 %-ը: 2018 թվականի 1-ին կիսամյակում ծառայողական տարածքների էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման եւ ջերմամատակարարման պայմանագրեր են կնքվել ծառայությունների միակ մատակարարների՝ «Մոսէներգոսբիտ» ՀԲԸ-ի, «Մոսվոդոկանալ» ԲԸ-ի, «Մոսկովյան միացյալ էներգետիկ ընկերություն» ՀԲԸ-ի հետ:

Վարձակալության վճարի ծախսերը կազմել են 358 740,4 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 25 %-ը:

Ոչ բնակելի (գրասենյակային) տարածքների վարձակալությունն իրականացվում է 2012 թվականին կնքված՝ վարձակալության 4 երկարաժամկետ պայմանագրերի հիման վրա: 2018 թվականի 1-ին կիսամյակում վարձակալության պայմանագրերի ծախսերը կազմել են 250 186,0 հազ. ռուբլի:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների համար բնակելի տարածքների վարձակալության նպատակով 2018 թվականի 1-ին կիսամյակում ծախսվել է 109 428,5 հազ. ռուբլի: Հանձնաժողովի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին ծառայողական բնակելի տարածքներ տրամադրվել են՝ հաշվի առնելով բնակմակերեսով ապահովման նորմերը եւ ծառայողական բնակելի տարածքների վարձակալության

առավելագույն արժեքը:

Այլ աշխատանքների, ծառայությունների ծախսերը կազմել են 205 973,9 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեմտացույցի 27 %-ը: «Այլ աշխատանքներ, ծառայություններ» հոդվածով առավելագույն տեսակարար կշիռը բաժին է ընկնում բժշկական սպասարկման (20 %), տեղեկատվայնացման (19,3 %), պահպանության ծառայությունների (18,3 %), թարգմանչական ծառայությունների (8,4 %), «սուրճի ընդմիջումների» կազմակերպման եւ սպասարկման (5,2 %) ծախսերին:

«Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի եւ Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման ծախսեր» հոդվածով 2018 թվականին նախատեսվել է 34 132,2 հազ. ռուբլի, 2018 թվականի 1-ին կիսամյակում դրամարկղային ծախսերը կազմել են 7 087,3 հազ. ռուբլի (21 %), մնացորդը՝ 27 044,9 հազ. ռուբլի (79 %):

«ԱՆԻԿՈ» ԲԲԸ ԸԽ-ի եւ «Ամրագրման եւ զբոսաշրջության քաղաքային կենտրոն» ԲԸ-ի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում Հանձնաժողովը կատարել է 7 087,3 հազ. ռուբլի գումարի չափով ծախսերի վճարում:

2018 թվականի առաջին կիսամյակում անցկացվել է 9 միջոցառում՝ Բարձրագույն խորհրդի 1 արտագնա նիստ (Ռուսաստանի Դաշնություն), Միջկառավարական խորհրդի 1 արտագնա նիստ (Ղազախստանի Հանրապետություն), Հանձնաժողովի խորհրդի 7 նիստ:

Գնումների ոլորտում Միության մարմինների գործունեության վերլուծությունը ցույց է տվել, որ դրանց իրականացումը կանոնակարգվում է Հանձնաժողովում՝ Հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունվարի 25-ի թիվ 5 որոշմամբ հաստատված՝ Հանձնաժողովի կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվերների տեղադրման եւ պայմանագրերի կնքման մասին հիմնադրույթով:

Գնումների պլանը Հանձնաժողովում չի կազմվում: Հանձնաժողովի կողմից

տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2018 թվականի 1-ին կիսամյակում կնքվել է 459 924,1 հազ. ռուբլի գումարի չափով 73 պայմանագիր, այդ թվում՝ հետեւյալ տեսակի գնումների վերաբերյալ. բաց մրցույթ՝ 310 314,5 հազ. ռուբլի գումարի չափով 13 պայմանագիր, երկփուլ մրցույթ՝ 51 887,3 հազ. ռուբլի գումարի չափով 3 պայմանագիր, աճուրդ՝ 12 204,5 հազ. ռուբլի գումարի չափով 5 պայմանագիր, ուղղակի գնումներ միակ մատակարարից՝ 83 372,9 հազ. ռուբլի գումարի չափով 49 պայմանագիր, գնանշումների հարցում՝ 2 144,9 հազ. ռուբլի գումարի չափով 3 պայմանագիր:

2018 թվականի 1-ին կիսամյակում Դատարանի գործունեության ապահովման համար կատարված ծախսերի գումարը կազմել է 162 791,7 հազ. ռուբլի կամ հաստատված բյուջետային ելեւմտացույցի 43,3 %-ը՝ փոփոխությունները հաշվի առնելով:

2018 թվականի 1-ին կիսամյակում 40 %-ից պակաս դրամարկղային ծախսերի կատարում նկատվում է հետեւյալ հոդվածներով՝ «Նյութական պաշարների արժեքի ավելացում»՝ 27,7 %, «Այլ վճարումներ»՝ 34,7 %, «Վարձակալության վճար գույքից օգտվելու դիմաց»՝ 33 %, «Այլ աշխատանքներ, ծառայություններ»՝ 37,2 %, «Տրանսպորտային ծառայություններ»՝ 39,7 %:

«Անձնակազմին վճարելու համար հատկացված ծախսեր՝ Միության մարմինների կողմից իրենց գործառույթների կատարումն ապահովելու նպատակներով» հոդվածով 2018 թվականին նախատեսվել է 217 976,9 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 102 443,5 հազ. ռուբլի (46,9 %), միջոցների մնացորդը կազմել է 115 533,4 հազ. ռուբլի (53,1 %):

Աշխատանքի վարձատրությունն ու նյութական խթանումը Դատարանում իրականացվում են Բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների աշխատանքի վարձատրության կարգը հաստատելու մասին» թիվ 82 որոշմանը եւ Դատարանի նախագահի

2015 թվականի մարտի 5-ի «Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների նյութական խթանման մասին հիմնադրույթը հաստատելու վերաբերյալ» թիվ 5 հրամանին համապատասխան:

2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Դատարանի հաստիքացանկը (64 միավ.) համալրվել է 71,8 %-ով՝ 46 մարդ փաստացի թվաքանակով: 2018 թվականի 1-ին կիսամյակում Դատարանի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթներ չեն անցկացվել:

«Հիմնական միջոցների գնում» հոդվածով 2018 թվականին նախատեսվել է 3 164,4 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 1 786,0 հազ. ռուբլի (51,5 %), մնացորդը կազմել է՝ 1 378,3 հազ. ռուբլի (48,5 %):

2018 թվականի 1-ին կիսամյակում Դատարանի կողմից ժամանակին եւ ամբողջ ծավալով հաշվառվել եւ հաշվառումից հանվել են հատկացված բյուջետային ֆինանսավորման հաշվին ձեռք բերված, ինչպես նաեւ կնքված պայմանագրերին համապատասխան անհատույց ստացված նյութական արժեքները:

«Այլ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում» հոդվածով 2018 թվականին նախատեսվել է 154 106,3 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 58 562,2 հազ. ռուբլի (38 %), մնացորդը՝ 95 544,1 հազ. ռուբլի (62 %): Տվյալ հոդվածի շրջանակներում կատարվել է տրանսպորտային ծառայությունների, կոմունալ ծառայությունների, վարձակալության, կապի ծառայությունների, այլ աշխատանքների եւ ծառայությունների վճարում:

Գույքն օգտագործելու դիմաց վարձակալության վճարի ծախսերը կազմել են 14 455,9 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 33 %-ը:

Ծառայողական բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերի նկատմամբ ընտրանքային հսկողության արդյունքներով՝ վարձավճարի փաստացի չափերի՝ սահմանված առավելագույն չափերից գերազանցում չի գրանցվել:

Կապի ծառայությունների ծախսերը կազմել են 2 526,3 հազ. ռուբլի կամ

բյուջետային ելեւմտացույցի 72,8 %-ը: Տվյալ հոդվածում տեղ են գտել հիմնական (ստացիոնար) քաղաքային հեռախոսներով կապի, բջջային կապի, Ինտերնետի (ցանցի հասանելիության, տվյալների փոխանցման ծառայության եւ այլնի), փոստային ծախսերի, հատուկ կապի, ֆելդեգերական ծառայության վճարման ծախսերը:

Տրանսպորտային ծառայությունների ծախսերը կազմել են 20 273,1 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 40 %-ը: Դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների տրանսպորտային ապահովման համար, Բժշկական եւ տրանսպորտային սպասարկման կարգին համապատասխան, Դատարանի կողմից պայմանագրեր են կնքվել «Բելտրանսսպեցավտո» ՊՀ-ի հետ: Վերը նշված պայմանագրերով սահմանված ցանկում ներառվել են հետեւյալ ծառայությունները՝ տրանսպորտային միջոցների կառավարման, պահպանման, տեխնիկական շահագործման, պահման, սարքին վիճակում պահպանման եւ այլ ծառայություններ:

Այլ աշխատանքների, ծառայությունների ծախսերը կազմել են 15 513,3 հազ. ռուբլի կամ բյուջետային ելեւմտացույցի 37,2 %-ը: 2018 թվականի 1-ին կիսամյակում տվյալ ենթահոդվածով կատարվել են տեղեկատվայնացման ծառայությունների վճարման ծախսեր, Դատարանի շենքի պահպանության ծախսեր, ծառայողական բնակարանի պահպանության, պարբերական եւ տեղեկատու հրապարակումներին բաժանորդագրության, ծառայողական գործուղումների ժամանակ կեցության եւ դահլիճում պաշտոնատար անձանց եւ պատվիրակությունների սպասարկման, տրանսպորտի ապահովագրության ծառայությունների վճարում, բժշկական սպասարկման, օտար լեզուների ուսուցման, բանկային հաշիվների բացման եւ սպասարկման ծառայությունների վճարում:

Աուդիտի ընթացքում պարզվել է, որ 26 նախնական հաշվետվությունների մասով բացակայում են անձնագրի՝ սահմանային հսկողության մարմինների՝ պետական սահմանը հատելու ամսաթվի նշմամբ էջերի պատճենները, դրանով իսկ չեն պահպանվել Դատարանի կազմակերպման եւ գործունեության կանոնների 9.4 բաժնի 1-ին կետի պահանջները:

8. Արտաքին աուդիտի (վերահսկողության) արդյունքները:

8.1. Բարձրագույն խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի «Եվրասիական տնտեսական միության 2018 թվականի բյուջեի մասին» թիվ 15 որոշմանը համապատասխան՝ 2018 թվականի Միության բյուջեի եկամուտները եւ ծախսերը կազմում են 8 101 468,1 հազ. ռուբլի:

8.2. 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ բաժնեմասային ներդրումների փոխանցման մասով Միության անդամ պետությունների պարտավորությունները կատարվել են 4 532 953,5 հազ. ռուբլի գումարի կամ տարեկան պարտավորությունների գումարի 55,9 %-ի չափով:

8.3. 2017 թվականի չօգտագործված մնացորդների հաշվին ծախսերի մասով ամփոփ բյուջետային ելեւմտացույցն ավելացել է 665 562,4 հազ. ռուբլով եւ 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 8 767 030,5 հազ. ռուբլի:

8.4. 2018 թվականի 1-ին կիսամյակում Հանձնաժողովի գործունեության ապահովմանը հատկացվել է 4 330 330,5 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 2 670 613,1 հազ. ռուբլի կամ 61,6 %: Դատարանին հատկացվել է 202 523,0 հազ. ռուբլի, դրամարկղային ծախսերը կազմել են 162 791,7 հազ. ռուբլի կամ 80,0 %:

8.5. ԳՀԱ-ների ֆինանսավորման՝ Հանձնաժողովի 2018 թվականի հրամանով հաստատված ծավալը ԳՀԱ-ների համար Հանձնաժողովի բյուջեով նախատեսվածից 82 086,9 հազ. ռուբլով պակաս է, ինչը վկայում է ԳՀԱ-ների համար նախատեսված միջոցների ոչ արդյունավետ պլանավորման մասին եւ տարվա կտրվածքով չօգտագործված մնացորդների առաջացման պատճառ է:

8.6. Դատարանի հաստիքացանկի համալրված չլինելը համակարգային բնույթ ունի: 2016-2018 թվականների ընթացքում համալրվածությունը չի գերազանցում 72 %-ը: 2017 թվականի ընթացքում եւ 2018 թվականի 1-ին կիսամյակում Դատարանում անցկացվել է թափուր պաշտոնները զբաղեցնելու 1 մրցույթ:

8.7. 107 միավոր ավտոտրանսպորտային միջոցներից Հանձնաժողովի կողմից 2018 թվականի 1-ին կիսամյակում անհրաժեշտության բացակայության պատճառով չի շահագործվել 15 տրանսպորտային միջոց:

8.8. Դատարանի գնումների 2018 թվականի պլանում 8 տեսակի ծառայությունների մասով (կապի, տրանսպորտային, կոմունալ, տարածքների վարձակալության, գույքի պահպանման, այլ աշխատանքների, ծառայությունների, այլ ծախսերի, նյութական պաշարների ձեռքբերման) դրանց ծավալը նշված չէ:

8.9. Դատարանի 26 նախնական հաշվետվություններում բացակայում են անձնագրի՝ սահմանային հսկողության մարմինների նշմամբ էջերի պատճենները, դրանով իսկ չեն պահպանվել «Ծառայողական գործուղումից վերադառնալիս փաստաթղթերի ձեւակերպման կարգի» 9.4 կանոնների 1-ին կետի պահանջները:

9. Հայտնաբերված խախտումների եւ թերությունների, դրանց պատճառների եւ հետեւանքների վերացման վերաբերյալ առաջարկություններ, Միության բյուջեի միջոցների ձեւավորման, կառավարման եւ տնօրինման արդյունավետության բարձրացման, Միության գույքի եւ մյուս ակտիվների օգտագործման, Միության իրավունքի մաս կազմող ակտերի եւ Միության անդամ պետությունների օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ու առաջարկներ:

9.1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ միջոցներ ձեռնարկել՝

1) թվով 15 միավոր պարապուրդի մատնված տրանսպորտային միջոցների հետագա օգտագործումն ապահովելու,

2) գիտահետազոտական աշխատանքների հաստատված պլանի հիման վրա գիտահետազոտական աշխատանքների անցկացման համար Հանձնաժողովի բյուջեն պլանավորելու **ուղղություններով**:

9.2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին, Եվրասիական տնտեսական միության դատարանին՝

1) վերլուծել կադրային ապահովվածությունը, մշակել հաստիքացանկի ամբողջական համալրման նոր մոտեցումներ կամ քննարկել դրա օպտիմալացման հարցը.

2) միջոցներ ձեռնարկել դեբիտորական եւ կրեդիտորական պարտքերի կրճատման ուղղությամբ.

3) մշակել եւ հաստատել հիմնական միջոցներով ապահովվածության նորմերը

«2018 թվականի առաջին կիսամյակում Եվրասիական տնտեսական միության բյուջեի կատարման եւ Եվրասիական տնտեսական միության բյուջեի կատարման մասին բյուջետային հաշվետվության ստուգում (ֆինանսական աուդիտ՝ համապատասխանության աուդիտի հետ մեկտեղ)» միջոցառման նպատակներն ու խնդիրները

Վերլուծել 2018 թվականի առաջին կիսամյակում Միության բյուջեի կատարման ընթացքը Միության մարմիններին բյուջետային միջոցներ հատկացնելիս, ինչպես նաեւ եկամուտներ ստանալու գործընթացում՝ Միության մարմինների կողմից բյուջետային միջոցների անարդյունավետ եւ ոչ նպատակային ծախսումը կանխելու նպատակով (հարցման հիման վրա ստացված տեղեկատվության եւ փաստաթղթերի վերլուծության մեթոդով):

4.1. Նպատակ 1. Ստուգել 2018 թվականի առաջին կիսամյակում Միության բյուջեի կատարման կարգի պահպանումը:

4.1.1. Միջոցառման խնդիրները՝

ստուգել ընթացիկ ֆինանսական տարվա համապատասխան ժամանակահատվածում Միության բյուջեի կատարման կարգի համապատասխանությունը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 78 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին հիմնադրույթի պահանջներին:

4.2. Նպատակ 2. Ստուգել Միության անդամ պետությունների կողմից 2018 թվականի առաջին կիսամյակում ներդրումների փոխանցման եւ փոխանցված ներդրումների հաշվառման ճշտության, ներդրումների մասով պարտքի մարման ճշտության ամբողջականությունը:

4.2.1. Միջոցառման խնդիրները՝

ստուգել Միության անդամ պետությունների կողմից ընթացիկ ֆինանսական

տարվա համապատասխան ժամանակահատվածում ներդրումների փոխանցման ամբողջականությունը՝ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից անդամ պետությունների կառավարություններին յուրաքանչյուր եռամսյակ տրամադրվող տեղեկատվության հիման վրա.

ստուգել անդամ պետությունների կողմից ազատ փոխարկելի արժույթով (ԱՄՆ դոլարով) փոխանցված միջոցների հաշվառման ճշտությունը.

ստուգել ներդրումների մասով պարտքի մարումը՝ Բարձրագույն խորհրդի կողմից սահմանված կարգի հիման վրա:

Նպատակ 3. Ստուգել 2018 թվականի առաջին կիսամյակում Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեւմտացույցը եւ միջոցները տնօրինողների (ստացողների) կողմից բյուջետային ելեւմտացույցը հաստատելու եւ վարելու համապատասխանությունը Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 474 հրամանով հաստատված՝ Միության բյուջեի կառավարչի կողմից ամփոփ բյուջետային ելեւմտացույցը եւ միջոցները տնօրինողների (ստացողների) կողմից բյուջետային ելեւմտացույցը կազմելու եւ վարելու կարգին:

4.3.1. Միջոցառման խնդիրները՝

ստուգել Միության բյուջեի կառավարչի կողմից, որը Հանձնաժողովն է՝ Բյուջեի մասին հիմնադրույթին համապատասխան, Միության եւ Միության մարմինների բյուջեների հաշիվների միջեւ դրամական միջոցների փոխանցման կարգի պահպանումը.

ստուգել Միության բյուջեի ծախսերի՝ Միության մարմնի բյուջետային նախահաշվի ծախսերի հոդվածների միջեւ վերաբաշխման մասով Միության բյուջեի կառավարչի (Հանձնաժողովի) կողմից ամփոփ բյուջետային ելեւմտացույցի մեջ փոփոխություններ կատարելու ճշտությունը՝ բացի աշխատավարձի ծախսերից՝ այդ հոդվածներով հաստատված՝ ծախսերի ընդհանուր ծավալի 10 տոկոսի սահմաններում.

ստուգել Միության բյուջեում փոփոխություններ կատարելու մասին Բարձրագույն խորհրդի որոշման առկայությունը Միության բյուջեի ծախսերի՝ Միության մարմնի բյուջետային նախահաշվի ծախսերի հոդվածների միջեւ այն ծախսերի ընդհանուր ծավալի 10 տոկոսը գերազանցող վերաբաշխման դեպքում, որոնք նախատեսված են այդ հոդվածներով, միջոցները տնօրինողների (ստացողների) միջեւ, ինչպես նաեւ աշխատավարձի համար ծախսերի հոդվածի կիրառմամբ:

4.1. Նպատակ 4. Վերլուծել 2018 թվականի առաջին կիսամյակում Միության բյուջեի միջոցների օգտագործման ճշտությունը՝ բյուջետային միջոցների անարդյունավետ եւ ոչ նպատակային ծախսումը կանխելու նպատակով:

4.4.1. Միջոցառման խնդիրները՝

ստուգել աշխատանքի վարձատրության համար նախատեսված դրամական միջոցների խնայողությունը Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, Միության համապատասխան մարմնի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների նյութական խթանմանն ուղղելու ճշտությունը.

ստուգել նախքան անդամ պետությունների կողմից հերթական ֆինանսական տարվա համար Միության բյուջեի հաստատումը, հերթական ֆինանսական տարվա Միության բյուջեն չհաստատվելու դեպքում նախքան ընթացիկ ֆինանսական տարվա ավարտը Միության մարմինների գործունեության ֆինանսավորման ճշտությունը.

ստուգել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Միության մարմինների հաշիվներում գոյացած բյուջետային այն միջոցների մնացորդների օգտագործման ճշտությունը, որոնք նախատեսված են կրեդիտորական պարտքի մարման, հիմնական միջոցների ձեռքբերման եւ ընթացիկ ֆինանսական տարում Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման համար, եւ բյուջետային հաշվետվության մեջ նշված

գործառնությունների արտացոլման ճշտությունը.

ստուգել Միության միջանկյալ բյուջետային հաշվետվության հավաստիությունը.

ստուգել անդամ պետությունների՝ Միության բյուջե կատարվող բաժնեմասային ներդրումների վճարային հաշվին 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Միության մարմինների հաշիվներում գոյացած բյուջետային միջոցների մնացորդները հաշվանցելու ճշտությունը՝ բացառությամբ կրեդիտորական պարտքի մարման, հիմնական միջոցների ձեռքբերման եւ ընթացիկ ֆինանսական տարում Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման համար նախատեսված բյուջետային միջոցների մնացորդների, ինչպես նաեւ այլ մուտքերի՝ հաշվի առնելով դեբիտորական պարտքի առկայությունը.

կատարել Միության մարմինների կողմից բյուջեի ծախսերի նախահաշվի կատարումը բնութագրող ցուցանիշների վերլուծություն.

ստուգել ծախսերի հոդվածների կտրվածքով ծախսերի մասով բյուջետային նախահաշվի կատարման փաստացի ցուցանիշների համապատասխանությունը միջոցները տնօրինողների (ստացողների) բյուջետային ելեւմտացույցով հաստատված ցուցանիշներին (փոփոխություններով).

վերլուծել Միության բյուջեի միջոցների ծախսերի մասով դեբիտորական եւ կրեդիտորական պարտքի վիճակը.

կատարել 2018 թվականի առաջին կիսամյակում գնումների պլանի, կնքված եւ կատարված կոնտրակտների եւ պայմանագրերի, գնումների ծախսերի վերլուծություն:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության մարմիններում

«Եվրասիական տնտեսական միության 2019 թվականի բյուջեի ձեւավորման

նախնական աուդիտ (վերահսկողություն)» արտաքին աուդիտի (վերահսկողության) իրականացման արդյունքներով

(հաստատված է պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների համատեղ որոշմամբ (20 թվականի ի որոշում))

1. **Միջոցառումն անցկացնելու հիմքը՝** Եվրասիական տնտեսական միության մարմիններում արտաքին աուդիտ (վերահսկողություն) իրականացնելու 2018 թվականի **պլանի 3-րդ կետ:**

2. **Արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտները՝ Եվրասիական տնտեսական միության դատարան** (այսուհետ՝ Դատարան), Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. Միջոցառման առարկան՝ հերթական ֆինանսական տարվա Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) բյուջեի ձեւավորման գործընթացը, ինչպես նաեւ արտաքին աուդիտի (վերահսկողության) օբյեկտների գործունեությունը Միության բյուջեի ձեւավորման ուղղությամբ:

4. Միջոցառման նպատակները՝ բյուջետային միջոցներն ստացողների բյուջետային նախահաշիվների նախագծերը քննարկելիս եւ Միության բյուջեի նախագիծը կազմելիս Միության մարմինների ծախսերի հիմնավորվածության, հավաստիության ու արդյունավետության եւ Միության բյուջեի ծախսերի օպտիմալացման սահմանումը՝ Միության 2019 թվականի բյուջեի նախագծի ձեւավորման փուլում:

5. Անցկացման ժամկետները՝ 2018 թվականի սեպտեմբերի 3-ից 11-ը՝ Դատարանում, 2018 թվականի սեպտեմբերի 12-ից հոկտեմբերի 5-ը՝ Հանձնաժողովում:

6. Գործունեության ժամանակահատվածը, որի ընթացքում անցկացվել է միջոցառումը՝ **2018 թվականի հունվար-օգոստոս:**

7. **Միջոցառման ընթացքում պարզվել է հետեւյալը:**

1-ին նպատակ. Ստուգել Միության բյուջեի նախագծի ձեւավորման կարգի համապատասխանությունը Միության անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերին, Միության իրավունքին եւ Միության մարմինների ակտերին:

Միության բյուջեն ձեւավորվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ) 2014 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին հիմնադրույթի վերաբերյալ» (այսուհետ՝ Բյուջեի մասին հիմնադրույթ) թիվ 78 որոշմանը եւ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2015 թվականի փետրվարի 24-ի «Եվրասիական տնտեսական միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերը կազմելու եւ ներկայացնելու կարգի մասին» (այսուհետ՝ Բյուջետային նախահաշիվների կազմման կարգ) թիվ 50 հրամանին համապատասխան:

Հանձնաժողովի կողմից մշակվել է 2019 թվականի բյուջեի նախագիծը, որով նախատեսված են 10 468 614,4 հազ. ռուբլի գումարի չափով եկամուտներ եւ ծախսեր: Եկամուտները ձեւավորվել են Միության անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների հաշվին: 2019 թվականի բյուջեի նախագծին համապատասխան ծախսերը բաղկացած են Հանձնաժողովի ծախսերից՝ 10 034 631,4 հազ. ռուբլի եւ Դատարանի ծախսերից՝ 433 983,0 հազ. ռուբլի:

Բյուջեի մասին հիմնադրույթին համապատասխան՝ 2019 թվականի բյուջեի նախագիծը Հանձնաժողովի կողմից համաձայնեցվել է Միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Միության անդամ պետությունների կառավարությունների հետ:

2019 թվականի բյուջեի նախագիծը լրամշակվել է՝ հաշվի առնելով Միության անդամ պետությունների կառավարությունների եւ լիազորված մարմինների դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաեւ հաշվի առնելով

Հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի սեպտեմբերի 7-ի նիստի ժամանակ կայացած քննարկումը:

Նիստի արդյունքներով Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ընդունվել է 2018 թվականի սեպտեմբերի 7-ի ««««Եվրասիական տնտեսական միության 2019 թվականի բյուջեի մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծի վերաբերյալ» Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշման նախագծի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծի վերաբերյալ» թիվ 137 կարգադրությունը, որին համապատասխան՝ Միության 2019 թվականի բյուջեի նախագիծը եկամուտների եւ ծախսերի մասով նախատեսված է 9 832 776,9 հազ. ռուբլի գումարի չափով:

Բյուջեի սկզբնական նախագծի համեմատ՝ ծախսերն ու եկամուտները նվազել են 635 837,5 հազ. ռուբլով (6 %):

2-րդ նպատակ. Ստուգել եւ վերլուծել Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի հիմնավորվածությունը, Միության իրավունքին եւ Միության մարմինների ակտերին դրանց համապատասխանությունը:

Աուդիտի ընթացքում Բյուջետային նախահաշիվների կազմման կարգի պահանջներին համապատասխան ստուգվել եւ վերլուծվել է Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի հիմնավորվածությունը:

Միության 2019 թվականի բյուջեի նախագծով Հանձնաժողովի ծախսերը նախատեսվում են 9 448 038,0 հազ. ռուբլի գումարի կամ Միության բյուջեի ծախսերի ընդհանուր ծավալի 96 %-ի չափով: 2018 թվականի համեմատ ենթադրվում է ծախսերի ավելացում՝ 1 346 569,9 հազ. ռուբլի գումարի կամ 16,7 %-ի չափով՝ հիմնականում Միության թվային օրակարգի իրագործման համար միջոցների հատկացման հաշվին:

Պլանավորվում է անձնակազմին տրվող վճարումները կատարել 3 412 507,0 հազ. ռուբլի գումարի կամ Հանձնաժողովի ծախսերի 36 %-ի չափով: Անձնակազմին տրվող վճարումների, կենսաթոշակային եւ ապահովագրական

հատկացումների հաշվարկները Հանձնաժողովի կողմից կատարվել են՝ ելնելով աշխատողների՝ 1071 միավոր հաստիքային թվաքանակից:

Ինտեգրված տեղեկատվական համակարգի գործունեության ապահովման եւ զարգացման ծախսերը պլանավորվել են 2 467 700,0 հազ. ռուբլի գումարի կամ Հանձնաժողովի ծախսերի 26 %-ի չափով: Ինտեգրված տեղեկատվական համակարգի գործունեության եւ զարգացման համար 2019 թվականին պլանավորվել են 897 700,0 հազ. ռուբլի գումարի չափով ծախսեր եւ Միության թվային օրակարգի իրագործման համար՝ 1 570 000,0 հազ. ռուբլի գումարի չափով ծախսեր:

Յուրաքանչյուր տարի Միության բյուջեն հաստատելիս նախատեսվում է առաջիկա ֆինանսական տարում Հանձնաժողովի կողմից օգտագործել Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման համար անցած ֆինանսական տարում չօգտագործված միջոցների մնացորդները:

Այսպես, Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա ինտեգրված տեղեկատվական համակարգի ծախսերի ֆինանսավորումը 2017 թվականին անցած ֆինանսական տարվա չօգտագործված մնացորդների հաշվին ավելացվել է 172 612,4 հազ. ռուբլով (2016 թվական), 2018 թվականին՝ 458 284,2 հազ. ռուբլով (2017 թվական):

Բյուջեի մասին հիմնադրույթի 35-րդ կետի համաձայն՝ հերթական ֆինանսական տարվա հունվարի 1-ի դրությամբ Միության մարմինների հաշիվներում գոյացած բյուջետային միջոցների մնացորդները, որոնք նախատեսված են կրեդիտորական պարտքի մարման, հիմնական միջոցների ձեռքբերման եւ ընթացիկ ֆինանսական տարում Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման համար, պահպանում են նպատակային բնույթը եւ Միության մարմինների կողմից հերթական ֆինանսական տարվա առաջին կիսամյակում օգտագործվում են որպես հերթական ֆինանսական տարվա համար Միության մարմինների բյուջետային նախահաշիվներով նախատեսված գերածախսերի լրացուցիչ

ֆինանսավորում՝ բյուջետային հաշվետվության մեջ նշված ֆինանսական գործառնությունների հետագա արտացոլմամբ:

Ուստի, Բյուջեի մասին հիմնադրույթով նախատեսված են պայմաններ, որոնց դեպքում կարող են օգտագործվել միջոցների մնացորդները: Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման համար անցած ֆինանսական տարում չօգտագործված միջոցների մնացորդների օգտագործումն առաջիկա ֆինանսական տարում յուրաքանչյուր տարի նախատեսվում է Բարձրագույն խորհրդի որոշմամբ՝ բացառության կարգով:

Գիտահետազոտական աշխատանքների համար ծախսերը պլանավորված են 250 000,0 հազ. ռուբլի գումարի չափով, որոնք կազմում են Հանձնաժողովի ծախսերի 2,6 %-ը:

Բյուջետային նախահաշվի մեջ գիտահետազոտական աշխատանքների ծախսերի հիմնավորումը թվով 43 թեմաներով աշխատանքների ցանկն է՝ առանց նշելու դրանց արժեքը, ինչը Բյուջետային նախահաշիվների կազմման կարգի 3-րդ կետի պահանջների չպահպանում է, համաձայն որի «բյուջետային նախահաշվի նախագծի կազմում» ասելով պետք է հասկանալ բյուջեի միջոցների պլանային ծավալի սահմանումը՝ Միության անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերին, Միության իրավունքին, Միության մարմինների ակտերին եւ հաշվարկային տվյալներին համապատասխան:

Ձեւավորվել է յուրաքանչյուր տարի անցած ֆինանսական տարում չօգտագործված՝ գիտահետազոտական աշխատանքների միջոցների մնացորդները Հանձնաժողովի կողմից առաջիկա ֆինանսական տարում օգտագործելու պրակտիկա: Այսպես, 2017 թվականին օգտագործվել են 60 908,3 հազ. ռուբլի գումարի չափով մնացորդներ (2016 թվականի), 2018 թվականին օգտագործվել են 54 828,3 հազ. ռուբլի գումարի չափով մնացորդներ (2017 թվականի):

2017 թվականի եւ 2018 թվականի 1-ին կիսամյակի բյուջեի կատարման

աուդիտի ընթացքում նշվել է, որ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի հրամանով հաստատվող՝ գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծավալն ավելի պակաս է, քան Հանձնաժողովի բյուջեով նախատեսված է համապատասխան տարում նշված նպատակների համար (2017 թվականին՝ 28 859,7 հազ. ռուբլով, 2018 թվականին՝ 82 086,9 հազ. ռուբլով), ինչը վկայում է գիտահետազոտական աշխատանքների համար հատկացված միջոցները Հանձնաժողովի կողմից անարդյունավետ պլանավորելու մասին եւ տարվա տվյալներով չօգտագործված մնացորդների գոյացման պատճառ է:

«Հիմնական միջոցների գնում»՝ 48 000,0 հազ. ռուբլի գումարի չափով, «Այլ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում»՝ 3 246 740,8 հազ. ռուբլի գումարի չափով, «Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման ապահովում»՝ 23 090,2 հազ. ռուբլի գումարի չափով հոդվածներով (ենթահոդվածներով) աուդիտի ընթացքում ներկայացվել են հաշվարկային տվյալներ:

Հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերը օպտիմալացնելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել, որ հիմնական միջոցների ձեռքբերման համար նախատեսված միջոցների չօգտագործված մնացորդները, Բյուջեի մասին հիմնադրույթի 35-րդ կետին համապատասխան, հիմնական միջոցների գնման համար բյուջեի մասին որոշմամբ նախատեսված՝ պլանավորվող ծախսերը գերազանցող չափով ենթակա են նշված նպատակներին ուղղելուն: 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ դրամարկղային կատարումը կազմել է 12,7 %, ինչի կապակցությամբ հիմնական միջոցների գնման համար ծախսերը պլանավորելիս առաջարկվում է հաշվի առնել հիմնական միջոցների գնման ծախսերի մասով ընթացիկ տարվա կատարման ձեւավորված մակարդակը:

2019 թվականի բյուջեի նախագծով Դատարանի ծախսերը կազմում են 384 738,9 հազ. ռուբլի կամ Միության բյուջեի ծախսերի ընդհանուր ծավալի 4 %-ը:

2018 թվականի համեմատ ենթադրվում է ծախսերի ավելացում՝ 22 220,0 հազ.

ռուբլի գումարի կամ 6,1 %-ի չափով: Ծախսերի ավելացման հիմնական մասը բաժին է ընկնում ծախքերի հետեւյալ հոդվածներին (ենթահոդվածներին)՝ «Աշխատավարձի ծախսեր» հոդվածով պլանավորվում է ծախսերի ավելացում 6 520,4 հազ. ռուբլով կամ 4,3 %-ով, «Տրանսպորտային ծառայություններ» հոդվածով պլանավորվում է ծախքերի ավելացում 5 391,1 հազ. ռուբլով կամ 11,2 %-ով, «Գույքն օգտագործելու համար վարձակալության վճար» հոդվածով պլանավորվում է ծախքերի ավելացում 2 874,4 հազ. ռուբլով կամ 6,5 %-ով:

Անձնակազմին վճարելու համար հատկացված ծախսերը պլանավորվել են 223 329,4 հազ. ռուբլի գումարի չափով, այդ թվում՝ աշխատավարձի ծախսեր՝ 158 158,9 հազ. ռուբլի, այլ վճարումներ եւ աշխատանքի վարձատրության հավելագրումներ՝ 65 170,5 հազ. ռուբլի:

Անձնակազմին վճարելու համար հատկացված ծախսերի եւ անձնակազմին տրվող վճարների հավելագրումների հաշվարկը կատարվել է Դատարանի կողմից՝ ելնելով թվով 64 հաստիքային միավոր ընդհանուր հաստիքների թվաքանակից: Կենսաթոշակային ապահովման համար հավելագրումների չափերը սահմանվել են այն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներ են Դատարանի դատավորները, պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները, սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրություն) համար հավելագրումների չափերը սահմանվել են Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերը պլանավորվել են 1 800,0 հազ. ռուբլի գումարի չափով: Հիմնական միջոցների պլանավորվող գնումների արժեքի բոլոր հաշվարկները կատարվել են մատակարարների կոմերցիոն առաջարկների հիման վրա եւ ելնելով Բելառուսի Հանրապետությունում ապրանքների ձեւավորված գներից:

Այլ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնման ծախսերը պլանավորվել են 156 559,7 հազ. ռուբլի գումարի չափով (տրանսպորտային

ծառայությունների, կապի ծառայությունների, վարձակալության, կոմունալ ծառայությունների, այլ աշխատանքների, ծառայությունների ծախսեր):

3-րդ նպատակ. Ստուգել Միության բյուջեի նախագծում եկամուտների եւ ծախսերի, Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի հանրագումարային ծախսերի եւ Միության բյուջեի պլանավորվող եկամուտների հավասարակշռվածության արտացոլման ամբողջականությունը:

Միության 2019 թվականի բյուջեի նախագծով նախատեսված են 9 832 776,9 հազ. ռուբլի գումարի չափով եկամուտներ եւ ծախսեր, այդ թվում՝ Հանձնաժողովի ծախսերը՝ 9 448 038,0 հազ. ռուբլի եւ Դատարանի ծախսերը՝ 384 738,9 հազ. ռուբլի: Այսպիսով, Միության բյուջեի նախագիծը եկամուտների եւ ծախսերի մասով հավասարակշռված է:

Բյուջեի նախագծի եկամուտները ձեւավորվել են Միության անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների հաշվին՝ Հայաստանի Հանրապետություն՝ 109 143,8 հազ. ռուբլի, Բելառուսի Հանրապետություն՝ 448 374,6 հազ. ռուբլի, Ղազախստանի Հանրապետություն՝ 699 110,4 հազ. ռուբլի, Ղրղզստանի Հանրապետություն՝ 186 822,8 հազ. ռուբլի, Ռուսաստանի Դաշնություն՝ 8 389 325,3 հազ. ռուբլի:

Բյուջեի մասին հիմնադրույթին համապատասխան՝ նախատեսված են նաեւ բյուջե այլ մուտքեր (տուգանքներ, տույժեր, բանկերի տոկոսներ), որոնք չեն պլանավորվում եւ ենթակա են անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների վճարման դիմաց Միության բյուջե հաշվանցման՝ ընթացիկ ֆինանսական տարում նրանց կողմից փաստացի կատարված փոխանցումների ծավալներին համամասն:

Բացի այդ՝ Միության 2019 թվականի բյուջեի նախագծի 7-րդ հոդվածի համաձայն սահմանվում է, որ 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հանձնաժողովի հաշիվների վրա գոյացած եւ Միության 2018 թվականի բյուջեում Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության

ապահովման եւ զարգացման, ինչպես նաեւ գիտահետազոտական աշխատանքների համար Հանձնաժողովի կողմից նախատեսված միջոցները բացառության կարգով պահպանում են նպատակային բնույթն ու այդ նույն նպատակներով օգտագործվում են 2019 թվականին՝ որպես Միության 2019 թվականի բյուջեում Հանձնաժողովի կողմից նախատեսված գերածախսերի լրացուցիչ ֆինանսավորում: Ընդ որում, Հանձնաժողովի կողմից չեն ներկայացվել նշված նպատակների համար ծախսերի ավելացման հիմնավորումներն ու անհրաժեշտության հաշվարկը:

8. **Արտաքին աուդիտի (վերահսկողության) արդյունքները:**

8.1. Միության 2019 թվականի բյուջեի նախագծով նախատեսված են 9 832 776,9 հազ. ռուբլի գումարի չափով Միության մարմինների եկամուտներ եւ ծախսեր:

8.2. Միության 2019 թվականի բյուջեի նախագծով Հանձնաժողովի ծախսերը նախատեսվում են 9 448 038,0 հազ. ռուբլի գումարի կամ 96 %-ի չափով: 2018 թվականի համեմատ ենթադրվում է ծախսերի ավելացում՝ 1 346 569,9 հազ. ռուբլի գումարի կամ 16,7 %-ի չափով:

8.3. Առաջիկա տարում Միության մարմինների ծախսերը պլանավորելիս հաշվի չեն առնվում տարվա արդյունքներով չօգտագործված միջոցների կանխատեսվող մնացորդները, որոնց մի մասը Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա օգտագործվում է հերթական ֆինանսական տարում: Այդպես, մնացորդների հաշվին 2017 թվականին Միության մարմինների ֆինանսավորումն ավելացվել է 402 077,6 հազ. ռուբլով, 2018 թվականին՝ 665 562,4 հազ. ռուբլով:

8.4. ԳՀԱ-ների ֆինանսավորման՝ Հանձնաժողովի հրամանով յուրաքանչյուր տարի հաստատվող ծավալը ԳՀԱ-ների համար Միության բյուջեով նախատեսված միջոցների ծավալից պակաս է:

8.5. Հանձնաժողովի 2019 թվականի բյուջետային նախահաշվի մեջ նշված չէ կատարման համար պլանավորվող ԳՀԱ-ների արժեքը, ինչը Բյուջետային նախահաշիվների կազմման կարգի 3-րդ կետի պահանջների չպահպանում է:

8.6. Միության 2019 թվականի բյուջեի նախագծով Դատարանի ծախսերը նախատեսվում են 384 738,9 հազ. ռուբլի գումարի կամ 4 %-ի չափով: 2018 թվականի համեմատ ենթադրվում է ծախսերի ավելացում՝ 22 220,0 հազ. ռուբլի գումարի կամ 6,1 %-ի չափով:

9. **Հայտնաբերված խախտումների եւ թերությունների, դրանց պատճառների եւ հետեւանքների վերացման վերաբերյալ առաջարկություններ, Միության բյուջեի միջոցների ձեւավորման, կառավարման եւ տնօրինման, Միության գույքի եւ մյուս ակտիվների օգտագործման արդյունավետության բարձրացման, Միության իրավունքի մեջ մտնող ակտերի եւ Միության անդամ պետությունների օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ու առաջարկներ:**

9.1. **Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝**

1) բարձրացնել Միության բյուջեի միջոցների պլանավորման որակը, այդ թվում՝ հաշվի առնելով նախորդ տարվա միջոցների մնացորդները.

2) ընդունել իրավական ակտեր կամ փոփոխություններ կատարել այն գործող իրավական ակտերում, որոնցով սահմանվում են Միության մարմինների գործունեության ապահովման նորմատիվները, ծախսերի հոդվածներով Միության բյուջեի պլանավորման մեթոդիկան, ինչպես նաեւ նախատեսվում է միջոցների ծախսումը՝ դրանց պլանավորման նպատակներին եւ հիմնավորումներին համապատասխան:

«Եվրասիական տնտեսական միության 2019 թվականի բյուջեի ձեւավորման ստուգում՝ ներառյալ 2019 թվականի բյուջետային նախահաշիվների նախագծերի հիմնավորվածության, բյուջեի պլանավորվող ծախսերի եւ եկամուտների հավասարակշռվածության վերլուծությունը (համապատասխանության աուդիտ՝ ֆինանսական աուդիտի հետ մեկտեղ)» միջոցառման նպատակներն ու հարցերը

Բյուջետային միջոցներն ստացողների բյուջետային նախահաշիվների

նախագծերը քննարկելիս եւ Միության բյուջեի նախագիծը կազմելիս Միության մարմինների ծախսերի հիմնավորվածության, հավաստիության ու արդյունավետության եւ Միության բյուջեի ծախսերի օպտիմալացման սահմանումը՝ Միության 2019 թվականի բյուջեի նախագծի ձեւավորման փուլում:

4.1. 1-ին նպատակ. Ստուգել Միության բյուջեի նախագծի ձեւավորման կարգի համապատասխանությունը Միության անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերին, Միության իրավունքին եւ Միության մարմինների ակտերին:

4.1.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել Միության բյուջեի նախագծի ձեւավորման կարգի համապատասխանությունը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 78 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» հիմնադրույթի պահանջներին.

ստուգել Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերը կազմելու եւ դրանք Հանձնաժողովի պատասխանատու դեպարտամենտ (այսուհետ՝ պատասխանատու դեպարտամենտ) ներկայացնելու ժամկետների պահպանումը.

ստուգել Միության բյուջեի նախագիծը կազմելու, Հանձնաժողովի կոլեգիայի անդամների հետ այն համաձայնեցնելու եւ Միության բյուջեի նախագիծը բացատրագրի, հիմնավորող փաստաթղթերի եւ ծախսերի հոդվածների մասով հաշվարկների հետ մեկտեղ քննարկման համար Միության անդամ պետությունների գործադիր իշխանության այն մարմիններ ուղարկելու ժամկետների՝ պատասխանատու դեպարտամենտի կողմից պահպանումը, որոնց վերապահված են բյուջեների ձեւավորման եւ կատարման գործառույթները (ընթացիկ ֆինանսական տարվա ապրիլի 1-ից ոչ ուշ).

ստուգել Միության բյուջեի նախագծի, ինչպես նաեւ դրա հետ միաժամանակ ներկայացվող փաստաթղթերի եւ նյութերի (բացատրագիր, հիմնավորող փաստաթղթեր եւ ծախսերի հոդվածների մասով հաշվարկներ) կազմին ու

բովանդակությանը ներկայացվող պահանջների պահպանումը պատասխանատու դեպարտամենտի կողմից:

4.2. 2-րդ նպատակ. Ստուգել եւ վերլուծել Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի հիմնավորվածությունը, Միության իրավունքին եւ Միության մարմինների ակտերին դրանց համապատասխանությունը:

4.2.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի կազմումն ու ներկայացումը՝ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի 2015 թվականի փետրվարի 24-ի «Եվրասիական տնտեսական միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերը կազմելու եւ ներկայացնելու կարգի մասին» թիվ 50 հրամանով հաստատված կարգի համաձայն.

ստուգել Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի համապատասխանությունը Միության այն ակտերին, որոնցով սահմանվում են Միության մարմինների հաստիքների առավելագույն թվաքանակը, աշխատանքի վարձատրության կարգը, կարգավորվում են նյութական եւ սոցիալական ապահովության հարցերը, բժշկական սպասարկում տրամադրելու կարգը եւ այլն.

ստուգել Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի համապատասխանությունը Միության մարմինների այն ակտերին, որոնցով կարգավորվում են գործուղումների, գիտահետազոտական աշխատանքների կատարման, Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի եւ Հանձնաժողովի խորհրդի նիստերի անցկացման, Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի գործունեության եւ զարգացման ծախսերի ֆինանսավորման հարցերը:

4.3. 3-րդ նպատակ. Ստուգել Միության բյուջեի նախագծում եկամուտների եւ ծախսերի, Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի հանրագումարային ծախսերի եւ Միության բյուջեի պլանավորվող եկամուտների

հավասարակշռվածության արտացոլման ամբողջականությունը:

4.3.1. Միջոցառման հարցերը՝

ստուգել Միության բյուջեի բոլոր եկամուտների (Միության անդամ պետությունների՝ Միության բյուջե կատարվող բաժնեմասային ներդրումների, բանկերում՝ հաշիվների վրա ժամանակավորապես ազատ միջոցների տեղաբաշխման արդյունքում գոյացած այլ մուտքերի, բանկային հաշվի պայմանագրերով տոկոսների, ակտիվների իրացումից, պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար տուգանքների եւ տույժերի գումարների մուտքից ստացվող միջոցների, դատական հայցերով փոխհատուցման գումարների եւ ապահովագրական փոխհատուցումների գումարների մուտքերի եւ այլ մուտքերի հաշվին) արտացոլված լինելը՝ ներառյալ եկամուտների՝ ըստ բյուջետային դասակարգման ծածկագրերի բաշխման ճշտությունը.

ստուգել Միության անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների հաշվին՝ Բաձրագույն խորհրդի կողմից սահմանված չափերով եկամուտների ձեւավորման հիմնավորվածությունն ու հավաստիությունը.

ստուգել Միության բյուջեի նախագծում պլանավորվող ծախսերի ձեւավորման, Միության մարմինների բյուջետային նախահաշիվների նախագծերի հանրագումարային ծախսերին դրանց պարտադիր կարգով ու ամբողջ ծավալով համապատասխանության հիմնավորվածությունն ու հավաստիությունը՝ ներառյալ ծախսերի՝ ըստ բյուջետային դասակարգման ծածկագրերի բաշխման ճշտությունը.

ստուգել Միության բյուջեի նախագծի հավասարակշռվածությունը՝ ելնելով այն բանից, որ Միության բյուջեն չի կարող պակասուրդ ունենալ: